Azg Ազգ

3 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 155(4773)

ISSN: 1829-1651

Իսրայելի դեսպանը Թուրքիայում տեղ չունի

Երկու նախկին դաշնակիցները այսօր խզում են դիվանագիտական կապերը

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

Երեկ, ճիշտ այն ժամանակ, երբ Իսրայելի արտգործնախարար Ավիգդոր Լիբերմանը գտնվում էր Մոլդովայում եւ հանդիպումներ ունենում այդ երկրի ղեկավարության հետ, Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ահմեդ Դավութօղլուն «հատուկ հրավիրված ասուլիսում» հանդես եկավ հայտարարությամբ. «Թուրքական կառավարությունը երկրից վտարում է Իսրայելի դեսպան Գաբի Լեւիին»: Դավութօղլուն հայտարարել է նաեւ, որ Անկարայի հաջորդ քայլը կլինի «Թել Ավիվում Թուրքիայի ներկայացուցչի (այժմ՝ արտակարգ եւ լիազոր դեսպան-Հ. Ա.) կարգավիճակի նվազեցում՝ ընդհուպ դեսպանատան երկրորդ քարտուղարի մակարդակի»: Բացի դրանից՝ Անկարան կկասեցնի ու չեղյալ կհայտարարի Իսրայելի հետ կնքած բոլոր ռազմական համաձայնագրերը: «Եկել է ժամանակը, որ Իսրայելը պատասխան տա իր գործածների համար: Ամենածանր փոխհատուցումը Իսրայելի համար կլինի այն, որ նա կորցրեց հավատարիմ ընկերոջ», Դավութօղլուի խոսքերը մեջբերում է իսրայելական zman.com-ը: Այս հայտարարությունից ժամեր առաջ Թուրքիայի ԱԳ ղեկավարը Փարիզում հանդիպում ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ: Վերջինս հորդորել է թուրք առաջին դիվանագետին՝ «Թույլ չտալ Իսրայելի հետ հարաբերությունների հետագա սրումը»: Ամերիկյան բարձր մակարդակի այս հորդորը Թուրքիան փաստորեն հաշվի չառավ...

«Թուրքական համբերությունը» թերեւս սպառեց նախօրեին Ջեֆրի Պալմերի ղեկավարած ՄԱԿ-ի հանձնաժողովի արձանագրության հրապարակումը՝ կապված «Մավի Մարմարա» նավի միջադեպի հետ: Նշենք, որ Պալմերի հանձնաժողովը եզրակացրել էր, որ Իսրայելի կողմից Գազայի հատվածի շրջափակումը «ամբողջովին օրինական է», բայց միեւնույն ժամանակ՝ «հանձնաժողովը իսրայելցի զինվորականների գործողությունները «Մարմարա»-ի վրա համարում է ոչ նպատակահարմար»:

Տես էջ 3

Երեքի խաչը

ԼՂՀ-ն իր անկախությունը հռչակեց դժվարին ժամանակներում: Անցնող 20-ամյակը տարի տարվա վրա մեզ թույլ տվեց ըմբռնել, թե ինչ ձեռքբերում էր Արցախի անկախությունը հայերիս համար՝ թեկուզ դե ֆակտո եւ թեկուզ դեռ իրավական բաղադրիչը չամբողջականացրած: Պատկերացնել միայն այն լրատվության նշանակությունը, որ Արցախի անկախության 20-ամյակին մի տեղում եւ մի ժամանակի մեջ՝ Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում էին Արցախի երեք նախագահ, Հայաստանի երկու նախագահ, Ամենայն հայոց կաթողիկոսը, սրանով արդեն կարելի է արձանագրել ժամանակի ահագնությունը՝ երբեք Հայաստանն իր ասրիբուսներով, Արցախն իր ճակատագրի տերը լինելու հաստատակամությամբ այդպես միաբերան չեն արտացոլել հայերիս ձգտումները, քան այս կլոր տարեթվի անդրադարձին՝ Արցախի 20-ամյակին, որտեղ եռակի ու երկակի նախագահները հիշատակի տուրք են մատուցել մեր փոքր հայրենիքի ազատագրման համար ընկած հայերի հուշահամալիրում, եւ Արցախի օրենսդիր մարմնի՝ առաջին զոհված ղեկավար Արթուր Մկրտչյանի հիշատակն են նաեւ հարգել՝ իրենց միասին լինելու հանգամանքով դրսից չուզողների աչքը հանելով:

Այս պատկերը հեռուստացույցով դիտելով, սակայն, մտածում ես մեր ժամանակի, Հայաստանի երեք նախագահների ու նրանց՝ Արցախի խնդրին կապվածության մասին՝ մտովի ակամա այդ ժամանակն արժեւորելով: Ու հասկանալի է դառնում, որ Արցախի խնդիրն ընդմիշտ կապվել է Հայաստանի երեք նախագահների անվան հետ՝ անկախ նրանից, թե նրանցից որին ով որքան է սիրում կամ չի սիրում: Նրանք երեքն էլ ազդել են Արցախի հարցի վրա, եւ Արցախի հարցն էլ երեքի ճակատագրի վրա է ազդել, եւ դեռ ազդելու է: Առաջին նախագահի ժամանակ երեւի ավելի հետաքրքիր է եղել՝ առաջինը լինելու դժվարությունների հետ մեկտեղ, բայց առաջինի ժամանակ Արցախն իր անկախությունը ձեռքբերեց: Բայց եւ՝ հենց առաջինը, «հայտնի ուժերի» ճնշմամբ, հեռացավ կառավարումից հենց Արցախի հարցի հետ կապված, նրա ճակատագիրը փոխվեց՝ փաթեթով թե փուլերով Արցախի հարցի լուծման վեճի պատճառով: Առաջինի դեպքում, այո, Արցախը ճակատագրական էր: Հայաստանի երկրորդ նախագահը հենց այն պատճառով ավելի հետաքրքիր եկավ եւ հետաքրքրվեց հանրության կողմից, քանի որ նրան հենց Արցախի հարցի հետ կապված ու Արցախի հարցի երաշխավորը լինելու պարագան դյուրությամբ թողեց երկրի ղեկի մոտ, ու անգամ՝ երկար թողեց: Ընդհանրապես՝ կարծում եմ, որ ամենահետաքրքիրը երկրորդի համար է եղել՝ արցախյան կապիտալը նա երկար ուներ, մինչեւ իր պաշտոնավարման վերջը, ու դրա համար նրան շատ բաներ ներվում էին: Եվ բացի այդ՝ առաջինին այլընտրանք լինելու հանգամանքը նրա համար միավորներ էր բերել ի սկզբանե, ինչը չի կարելի ասել Հայաստանի երրորդ նախագահի մասին: Այս երկուսի սվերը հետաքրքրում է երրորդ նախագահին, թեեւ նա էլ նույն կերպ Արցախյան կապիտալից ուներ եւ այժմ էլ ունի, սակայն նրան կրկնակոխ հետեւում են երկու նախագահների արցախյան սվերները, ու նա երրորդ, բոլորովին նոր ճանապարհով գնալու խնդիր ուներ ի սկզբանե, ինչը երկուսի գծած հետագծի պարագայում դժվար է: Մանավանդ նախկին երկուսը բոլորովին էլ բացակա չեն ու անցյալում չեն, ու ամեն կարեւոր հարց երբ բարձրանում է՝ միշտ էլ հանրությունը սպասում է, որ բացի երրորդ նախագահից՝ այդ հարցի մասին կարծիք հայտնեն առաջին եւ երկրորդ նախագահները նաեւ: Ահա այսպես երկուսի սվերը ծանրանում է երրորդի ուսերին, եւ այդ ծանրությունը իրեն զգացնել է տալու հատկապես Արցախի հարցում, Արցախի խնդրի իրավական ամրագրման՝ դեռեւս աղագա եւ դժվարին ճանապարհին:

Իսկ առայժմ՝ Արցախի թանկ անկախությունը 20 տարեկան է:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հ. Գ.-Հայաստանի առաջին նախագահը Արցախի անկախության 20-ամյակի օրը այդպես էլ չայցելեց Ստեփանակերտ:

Համանախագահները շուտ կգան

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի շրջանակներում անցկացվող նախարարական ու նախագահական հանդիպումների, ինչպես նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների տարածաշրջանային այցելությունների մասին առավել հաճախ տեղեկանում ենք ադրբեջանական մամուլից:

Այս հանգամանքը ոչ այնքան նշանակում է, թե մեզանում տեղեկությունների արտահոսքը փիչ պատահող երեւույթ է, պարզապես ադրբեջանական կողմից ճիշտ ժամանակին են հայտնում այնպիսի լուրերը, որոնք որեւէ ընթացք տեսնելու հնարավորություն են տալիս, թեեւ պետք է ընդունել, որ ավելի հաճախ դրանք ամենասովորական ապատեղեկատվություն են:

Ինչեւէ, հերթական անգամ, ըստ «Սալամնյուզ» կայքէջի «դիվանագիտական աղբյուրների», մինչեւ սեպտեմբերի 15-ն ակնկալվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների այցելություն տարածաշրջան՝ Երեւանում եւ Բաքվում հանդիպելու նախագահների ու արտգործնախարարների հետ: Ըստ նույն աղբյուրի, նախատեսվում է նաեւ այցելություն Լեռնային Ղարաբաղ՝ հանդիպելու արցախյան ղեկավարության հետ:

Ամենայն հաջողությամբ այս տեղեկությունը կարող է ադրբեջանական լրատվական ընթացքի հերթական ապատեղեկատվությունը լինել, թեեւ նույն հաջողությամբ կարող է լինել իրականությանը մոտ լուր: Եվ եթե հաշվի առնենք, որ ադրբեջանական մամուլում վերջին շրջանում «կենտրոն» է նետվում նաեւ Սարգսյան-Ալիեւ հավանական հանդիպման գաղափարը՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում տեղի ունենալու հավանականությամբ, ապա համանախագահների այցելության մասին լուրն էլ պետք է մատուցվի մի օրակարգով, որում այդ հանդիպման նախապատրաստման հարցերն են:

Առայժմ հանդիպման հավանականությունը փաստող ոչ մի պաշտոնական հայտարարությունն չի արվել:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանը ճանաչում է Լիբիայի Ժամանակավոր անցումային խորհրդին

Լիբիայում տիրող իրավիճակի միջազգային գնահատականը գնալով առավել մեծ շրջանակներ է ընդգրկում: Հայաստանը եւս միացել է այն երկրներին, որոնք ընդունել են Լիբիայի ժամանակավոր անցումային խորհրդին որպես իշխանության: Պատասխանելով «Հայաստանի Հանրապետություն» թերթի հարցին, թե ինչ դիրքորոշում ունի Հայաստանը Լիբիայի ժամանակավոր անցումային կառավարությանը ճանաչելու վերաբերյալ, ԱԳՆ մամուլի խոսնակ **Տիգրան Բալայանը** նշել է. «Փարիզում Լիբիայի դեսպանության միջոցով արդեն փոխանցվել է ՀՀ ԱԳՆ օգոստոսի 31-ի հայտագիրը Լիբիայի Ժամանակավոր անցումային խորհրդի ճանաչման մասին»:

Ա. Հ.

Արցախը համայն հայության հպարտությունն է

Արցախը հերթական անգամ նշեց իր անկախության տոնը: Դժվար է ասել՝ 1991-ի սեպտեմբերի երկուսին, երբ ժողովրդական պատգամավորների ԼՂ մարզային եւ Շահումյանի շրջանային խորհուրդները համատեղ նիստում վկայագրում էին մինչ այդ ԽՍՀՄ քարտեզի վրա գոյություն չունեցող նոր հանրապետության ծնունդը, արդյոք նրանք պատկերացնո՞ւմ էին, թե ինչպիսի պետություն են կառուցելու եւ ինչ ճակատագիր է այդ երկրին սպասում: Իրականն այն է, որ նորահռչակ ԼՂՀ-ն ինքնակայացման առաջին քննությունը հանձնեց ոչ թե դիվանագիտական կամ սոցիալ-տնտեսական ճակատներում, ինչը բնորոշ է անկախության ուղին բռնած շատ երկրների, այլ հենց պատերազմի դաշտում: Եվ պատերազմում ձեռք բերված հաղթանակը նրան նաեւ քաղաքական անհրաժեշտ դիվիդենտներ բերեց: Դա ընդամենը սկիզբն էր, իսկ հիմա ԼՂՀ-ն նոր մարտահրավերների առաջ է կանգնած, առաջին հերթին, ժողովրդավարության, սոցիալ-տնտեսական բնագավառներում:

ԼՂՀ հռչակման 20-ամյակի առթիվ Արցախի հանրային հեռուստատեսությամբ ելույթ ունենալով՝ Արցախյան շարժման ակտիվիստներից մեկը, ներկայումս ԼՂՀ գյուղատնտեսության նախարար Արմո Ծատրյանը, գնահատելով անցած քսանամյա ուղին՝ մասնավորապես ասել է, որ եթե քաղաքական ասպարեզում իսկապես ձեռք ենք բերել հաջողություններ, ապա տնտեսական ճակատում հետ ենք մնացել: Կարծես նրա ասածի շարունակությունն էր Շարժման մեկ այլ առաջամարտիկի, ԼՂՀ կրթության եւ գիտության էքս-նախարար Համլետ Գրիգորյանի՝ դարձյալ ԱՀՀ-ով հնչեցրած այն մտահոգությունը, թե Արցախի գյուղերն ասիճանաբար դատարկվում են:

Անշուշտ, 1988 թվականի տնտեսապես ինքնաբավ երկրամասի հետ չես կարող համեմատել ներկայիս Ղարաբաղը: Երկրի միջազգային չճանաչվածությունը, Ադրբեջանի հետ տեւական հակամարտությունը, շրջափակումը եւ այլն, շոշափելիորեն ազդում են լիարժեք կայացման գործընթացի վրա, եւ եթե առանձնացնելու լինենք մեր անկախության ամենամեծ նվաճումը, ապա կարող ենք շեշտել, որ ինչպես տոնական հանդիսավոր միջոցառման ժամանակ նշել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, դա Արցախի պաշտպանության բանակն է:

Ղարաբաղցիներն իրոք սիրում են իրենց հայրենիքը, մարտնչող են, համառ, քչով բավարարվող: Դրանով է պայմանավորված, որ թեպետ երկրում բնակարանների ու աշխատատեղերի խիստ սղություն կա, գյուղերից արտահոսքը շարունակվում է, այդուհանդերձ, ժողովրդագրությունը դարձյալ մնում է կայուն սանդղակի վրա: Ազգաբնակչության կենսապայմանների բարելավման ուղղությամբ երկրում լուրջ ջանքեր գործադրվում են, սակայն արցախցիների՝ հայրենի հողին կապվածությունը չի կարելի անվանել սոսկ իրականացվող բարեփոխումների արդյունք: Դա հայրենի օջախներին կառչած մնալու մեր դարավոր ավանդույթն է, որով էլ միշտ կանգուն է մնացել Արցախը:

Ղարաբաղում իսկապես կարողանում են միասին նշել համաժողովրդական տոնը եւ ուրախանալ ժողովրդովի: Միավորվում են ճիշտ այնպես, ինչպես արտաքին վտանգի ժամին: Սեպտեմբերերկուսյան տոնակատարությունները դրա վառ վկայությունն էին:

ԼՂՀ հռչակման 20-ամյակին նվիրված հանդիսավոր ժողովի ժամանակ, Ստեփանակերտում, Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը դիպուկորեն ասել է, որ Արցախը համայն հայության հպարտությունն է: Եվ այս բնորոշման մեջ խտացված են Ղարաբաղի անցյալը, ներկան ու ապագան:

ԿԻՄ ՉԱՔԲԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Մարգար Օհանյանի խափանման միջոց ընտրվել է կալանքը

ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական գործով պաշտոնական դիրքը չարաշահելու եւ գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 308-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրանք է առաջադրվել ոստիկանության ճանապարհային ոստիկանության ծառայության նախկին պետ, ոստիկանության գնդապետ Մարգար Օհանյանին, նրա նկատմամբ դատարանը խափանման միջոց է կիրառել կալանավորում: Գործի նախաքննությունը շարունակվում է: Այս մասին երեկ հայտնեցին ՀՔԾ-ից:

ԱԶԳ **Ընթացիկ**

Ազատ անկախ Արցախ

ԼՂՀ-ն տոնում է անկախության 20-ամյակը

20 տարի առաջ Արցախը ժամանակակից պատմության մեջ մտավ անկախ եւ ինքնիշխան պետություն: Սեպտեմբերի 2-ին Ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի, Շահումյանի շրջանային խորհրդի նստաշրջանում ընդունվեց ԼՂՀ հռչակման եւ նրա պետական իշխանության ու կառավարման ժամանակավոր մարմինների ձեւավորման հռչակագիրը: Պատմական ճշմարտությունը մի քանի տասնամյակ անց վերականգնելու արցախցիների ու ողջ հայության պահանջին դեմ էր Ադրբեջանը: Արցախահայության՝ ազատ ու անկախ ապրելու ցանկությանը նա պատասխանել եւ պատասխանում էր կոտորածով՝ Բաքվում, Սումգայիթում, Կիրովաբադում, Շահումյանում եւ Մարաղայում բնաջնջելով տեղի հայությանը: Դրան հաջորդեց պարտադրված պատերազմը Ադրբեջանի կողմից եւ Արցախն իր անկախությունը վերագտավ արյան ու հազարավոր կյանքերի գնով:

«Եթե նախկինում Արցախը հայության ցավն էր, ապա այսօր հայության հպարտությունն է: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կայացած պետություն է իր բոլոր կառույցներով: Նույնիսկ պատերազմի սպառնալիքի պայմաններում նա անհամեմատ ավելի ժողովրդավարական է, քան նրանք, ովքեր ժողովրդավարության ու ազգային հանդուրժողականության մասին խոսում են հայության դեմ հերթական պատերազմի սպառնալիքներ հնչեցնելուց ազատ ժամանակ: Մենք ամեն ինչ անելու ենք ոչ միայն Արցախի խաղաղության, անվտանգության ամրապնդման, այլեւ սոցիալ-տնտեսական ու մշակույթի զարգացման համար: Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգավորման գործընթացը շարունակվում է: Մենք, ի տարբերություն ոմանց, ճշմարտությունը չենք թաքցնում մեր ժողովրդից եւ ցանկալին չենք ներկայացնում իրականության փոխարեն: Մեր դիրքորոշումը հստակ է. Լեռնային Ղարաբաղը չի կարող հետագայում ունենալ ավելի ցածր կարգավիճակ, քան այսօր ունի», շնորհավորելով արցախահայությանը պետության կարեւորագույն տոնի առթիվ՝ ասել է ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանը**՝ հավելելով, որ այն ինչ հնարավոր եղավ 1923թ, անհնար է 21-րդ դարում, մանավանդ որ հայությունը չափազանց մեծ գին է վճարել անկախության եւ ազատության համար:

«Մենք պայքարել են միացյալ Հայաստանի եւ համայն հայության համար: Արցախի անկախության հռչակումը դարեր շարունակ ունենալու է պատմական, բարոյական, իրավական նշանակություն», 20 տարի անց Արցախի անկախության ձեռքբերումն այսպես է գնահատում ԱԺ պատգամավոր, ԼՂՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փորձագետ **Լարիսա Ալավերդյանը**:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան **Էդիկ Մինասյանն** էլ հիշեցնում է պատմության մեջ ամրագրված խոսքը, որ արցախյան շարժումն այն զանգն էր, որն արագացրեց ԽՍՀՄ-ի քայքայումը:

Լարիսա Ալավերդյանին բարկացնում է, որ Արցախի վերաբերյալ մշակված հայեցակարգ չկա, հայկական հեռուստաընկերություններն էլ Ղարաբաղի քարտեզը պատշաճ կերպով չեն ներկայացնում:

Պատմաբանն էլ կարեւորեց Արցախի մասնակցությունը բանակցություններին: Նրա գնահատմամբ՝ Արցախը կայացած պետություն է, մնում այն իրավական տեսանկյունից ամրագրել:

«Հայաստանի գործադիր իշխանությունը պասիվ եւ սխալ է գործում: Սակայն պասիվ է նաեւ խորհրդարանը», ասում է Ալավերդյանը: Նա հանդես է եկել նախաձեռնությամբ, որ 1991-94թթ. ադրբեջանցիների գործողությունները ճանաչվեն որպես ցեղասպանություն, բայց ոչ մի առաջընթաց չկա այդ առումով, մինչդեռ այդ հարցը պետք է լինի մեծ լրակարգում», ասաց նա՝ երեսյթը անվանելով երեւանյան անսկզբունքայնություն:

Հայաստանի ազգային արխիվի փոխտնօրեն **Էդգար Հովհաննիսյանը** համոզված է, որ 21-րդ դարում կլինի 5-րդ հռչակագիրը, որը կհռչակի երկու պետությունների միասնությունը:

Քաղաքագետ **Սերգեյ Մինասյանի** մեկնաբանությամբ՝ Արցախն ավելի ժողովրդավար է, կայացած քան նման հակամարտություն ունեցող կիսաճանաչված այլ հանրապետությունները:

ՀԱՄՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հանրապետության հրապարակի շտրվանները ժամանակավորապես չեն գործելու

Երեւանի քաղաքապետարանից տեղեկացանք, որ սեպտեմբերի 20-ին ժամանակավորապես կդադարեցվի Հանրապետության հրապարակի շտրվանների աշխատանքը: Դա պայմանավորված է նորովի գեղարվեստական ձեւավորման եւ արդիականացման աշխատանքներով: Նոր լուծումներով հագեցած շտրվանները կգործարկվեն ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի օրը՝ սեպտեմբերի 21-ին:

Մ. Մ.

Կրակների խնդիրը հասավ Ազգային ժողով

ՀՀ ԱԺ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման հարցերի մշտական հանձնաժողովը երեկ կազմակերպել էր աշխատանքային քննարկում՝ նվիրված Երեւան քաղաքում կրակների ապմանոնաժման խնդրին:

Աշխատանքային քննարկմանը մասնակցել են ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչները, Երեւանի քաղաքապետի առաջին տեղակալ Տարոն Մարգարյանը եւ քաղաքապետարանի այլ պատասխանատու անձինք: Ըստ հանձնաժողովի նախագահ Հովհաննես Մարգարյանի՝ օրեր առաջ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի մոտ կայացած քննարկման արդյունքում ԱԺ խմբակցությունները որոշել են այս հարցի շուրջն անցկացնել աշխատանքային քննարկում եւ հարցի առնչությամբ քաղաքապետարանից ստանալ տեղեկատվություն, որպեսզի խմբակցությունները ներկայացնեն իրենց առաջարկները եւ տեսակետները:

Քաղաքապետի առաջին տեղակալ Տարոն Մարգարյանը տեղեկացրեց, որ Երեւանում գտնվող 3827 կրակներից արդեն ապամոնտաժվել է 1138-ը, դրանք վերջին տարիներին չեն գործել եւ չեն ունեցել փաստաթղթեր: Ըստ Տ. Մարգարյանի՝ հաշվի առնելով նաեւ քաղաքացիների առաջարկները՝ ապամոնտաժվում են բացառապես պետական գրանցում չունեցող կամ գործունեության պայմանագրերի ժամկետները լրացած, քաղաքի Կենտրոն վարչական համայնքի կենտրոնական փողոցներում գտնվող կրակները եւ տաղավարները, ընդ որում՝ այժմ Կենտրոն վարչական համայնքում գործում են 180 կրակներ, որոնք չունեն պետական գրանցում եւ գործում են անօրինական: Սոցիալապես անապահով կրակատերերի հետ ընթանում են բանակցություններ, որպեսզի կրակները տեղադրվեն այլ վայրերում: Բացի սրանից, Տ. Մարգարյանի տեղեկացմամբ, առկա է նաեւ քաղաքապետի հստակ հանձնարարական, ըստ որի, այսուհետեւ նոր կրակների համար տարածքներ չեն հատկացվելու, ինչպես նաեւ չեն երկարացվելու գործող կրակների ժամկետները: Ջեն ապամոնտաժվելու քաղաքի մյուս՝ 11 վարչական համայնքների երկրորդական, երրորդական փողոցներում կամ բակային տարածքներում գտնվող կրակներն ու տաղավարները՝ անկախ դրանց իրավական կարգավիճակից: Հ. Մարգարյանը փոխքաղաքապետ Տարոն Մարգարյանին առաջարկեց հանձնաժողովին եւ ԱԺ խմբակցություններին ներկայացնել տեղեկանք, որում նշված կլինեն խնդրի վերաբերյալ նախատեսված եւ կատարված բոլոր քայլերն ու տվյալները, ժամանակացույցը եւ հայեցակարգը: Այս մասին հայտնում է ԱԺ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունը:

ՀԱՅՏՆԻՆ՝ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ

Wikileaks-ը բացահայտել է. 2008-ի փետրվարին՝ Քոչարյանն ու Սերժ Սարգսյանը տարբեր դիրքորոշումներ ունեին

Հայաստանյան իրականության մասին WikiLeaks-ը հերթական բացահայտումն է արել, որը վերաբերում է 2008-ի հետընտրական շրջանում Հայաստանի իշխանությունների, մասնավորապես, Սերժ Սարգսյանի եւ Ռոբերտ Քոչարյանի մոտեցումներին: Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան Ջոզեֆ Փենինգթոնը ԱՄՆ պետքարտուղարությանն ուղղված իր գաղտնի նամակագրության մեջ ներկայացրել է հանրապետական կուսակցության փոխնախագահ Սամվել Նիկոյանի հետ 2009-ի փետրվարին իր հանդիպման մանրամասները, որտեղ խոսք է գնացել 2008-ի մարտի 1-ի դեպքերի մասին: Ըստ այդմ, Սամվել Նիկոյանը Փենինգթոնին ասել է, որ մարտի 1-ից առաջ այդ ժամանակվա նախագահ Ռոբերտ Քոչարյանն ու վարչապետ Սերժ Սարգսյանը տարբեր մոտեցումներ են ունեցել կապված ընդդիմության շուրջօրյա բողոքի ակցիաներից ազատվելու հետ: Նշվել է, որ Ռոբերտ Քոչարյանը կոշտ մոտեցման կողմնակից է եղել եւ հենց սկզբից մտադիր է եղել ցրել Ազատության հրապարակում հավաքվածներին, այնինչ Սերժ Սարգսյանը առավել մեղմ մոտեցում է ունեցել եւ մտածել է, որ պետք է սպասել, մինչեւ ընդդիմությունը եւ ժողովուրդը հոգնեն հանրահավաքներից: Փենինգթոնն իր գաղտնի նամակում նշել է, որ Նիկոյանն իրեն հայտնել է, որ սկզբում Սերժ Սարգսյանի տեսակետը առաջնային է եղել եւ այդ մասին օտարերկրյա դիվանագետների հետ հանդիպման ժամանակ ասել է նաեւ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը: Նիկոյանը խոսել է նաեւ «Ժառանգության» մասին: Նա համոզմունք է հայտնել, որ Ռաֆֆի Հովհաննիսյանը գործում է ամերիկյան կողմի ցուցումներով, նաեւ մտահոգություն է հայտնել, որ Ռաֆֆի Հովհաննիսյանը համագործակցում է Լեւոն Տեր-Պետրոսյանի հետ:

Հ. Ա.

Գորան Լենմարկեր. Պատերազմ հեշտ է սկսել, դժվար՝ ավարտել

«ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած խաղաղ կարգավորումը ձեռնտու է բոլոր կողմերին: Եվրամիությունը պետք է լուրջ աջակցություն ցուցաբերի այդ կազմակերպությունում հարավկովկասյան երկրների անդամությանը», ադրբեջանական «Ադա» գործակալությանը տված հարցազրույցում հայտարարել է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի նախկին նախագահ, այժմ Յարլ Յարլմարսոնի անվան ժողովրդավարության հիմնադրամի նախագահ Գորան Լենմարկերը:

Հարցին, թե արդյոք սատուս քվոն ի վերջո կբերի՞ պատերազմի, Լենմարկերը նշել է, որ Հարավային Կովկասում նոր պատերազմ չի բռնկվի: «Պատերազմ հեշտ է սկսել, դժվար՝ ավարտել», ասել է Լենմարկերը, ընդգծելով, որ դժվար է կանխատեսել ռազմական գործողությունների հետեւանքները:

Իսկ պատերազմ սկսելն ընդհանրապես, Լենմարկերի մեկնաբանությամբ, բերում է երիտասարդ տղամարդկանց ու քաղաքացիական անձանց սպանության, շատերը վիրավորվում են, խեղվում, տնտեսությունը՝ քանդվում: «Ուստի ես համոզված եմ, որ երկու երկրների պատասխանատու առաջնորդները, որոնց ես հանդիպել եմ, նման բախտորոշ որոշումներ չեն կայացնի», ասել է ԵԱՀԿ ԽՎ նախկին ղեկավարը:

Որպես առաջնային քայլ Լենմարկերը նշել է կողմերի հասարակական կարծիքի համար խաղաղ լուծման փոխզիջումային բնույթի ընդունումը, քանի որ կողմերից ոչ մեկը չի կարող լիովին բավարարել իր պահանջները: Իսկ այն հանգամանքը, որ ներկա դրությամբ ղարաբաղյան հարցի բանակցությունները ընթանում են Ռուսաստանի ակտիվ ներգրավվածությամբ, Լենմարկերը դրական է գնահատել, հավելելով, թե դրա ֆոնին բավականին պասիվ են ԵՄ-ն ու ԱՄՆ-ը:

«Եվրոպան ԵՄ-ի անդամ ժողովուրդների բազմաթիվ պատերազմներից հետո իր տարածքում խաղաղության կառուցման, բարեկեցության, ժողովրդավարության հաստատման բացառիկ փորձ ունի, ակտիվորեն աշխատում է Հարավսլավիայում պատերազմից հետո խաղաղության հաստատման ուղղությամբ», ասել է Լենմարկերը:

Ա. Հ.

«Ազատ դեմոկրատներին» էլ կանչեցին

ԱՄՆ պետքարտուղարության Հայաստանի բաժնի վարիչ Տրինա Սահանը եւ Հայաստանում ԱՄՆ դեսպանատան քաղաքական հարցերով պատասխանատու Քրիստոֆեր Անդերսենը երեկ հանդիպել են նորաստեղծ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավարության հետ եւ քննարկել Հայաստանի ներքաղաքական իրավիճակին, տարածաշրջանային զարգացումներին եւ միջազգային հարաբերություններին վերաբերող հարցեր: Ի դեպ, նույն կարգի հանդիպումներ վերոհիշյալ պատասխանատուները մի փոքր ավելի վաղ ունեցել էին ՀԱԿ-ի ներկայացուցիչների հետ: Ի՞նչ են ճշտում երկկողմանի՝ պարզ չէ, սակայն սեպտեմբերը եկել է, եւ շատերն են ուզում պարզություն մտցնել ջրերում: Այդ թվում՝ ոչ միայն Հայաստանի քաղաքական դաշտը ներկայացնողները, ըստ տարբեր լուրերի, ոչ առանց ամերիկյան շրջանակների ստեղծված այս կուսակցությունը, այլեւ...

Մ. Խ.

Նորոգվել է Երեւանի թիվ 71 դպրոցը

Մոսկվաբնակ բարերար Արթուր Վարժապետյանն արձագանքել է Երեւանի քաղաքապետի կոչին եւ «Օգնիր դպրոցիդ» կայքի միջոցով գումար փոխանցելով՝ ապահովել Երեւանի Նելսոն Ստեփանյանի անվան թիվ 71 դպրոցի հիմնանորոգման համար անհրաժեշտ ծախսերը:

Բարերարի հետ հանդիպման ժամանակ քաղաքապետ Կարեն Կարապետյանը նշել է, որ նման կամավոր ներդրումները խրախուսելի են եւ անհրաժեշտ:

Ընդգծելով «Օգնիր դպրոցիդ» արշավի կարեւորությունը, քաղաքապետը նշել է, որ դպրոցը կարիքներ ունի եւ յուրաքանչյուր կամավոր օգնություն կարող է զգալի օգուտ տալ ու արմատապես փոխել վիճակը.

«Մեր երկրի լավ ապագան կրթված հասարակությունն է: Եթե ուզում ենք արժանավայել երկրում ապրել, պետք է ունենանք արժանավայել դպրոց», ընդգծել է Կարապետյանը: Նրա խոսքերով՝ դրամահավաքության երեւույթը մերժելու ուղղությամբ քաղաքապետարանը որդեգրել է քաղաքականություն՝ կանգնել սոցիալապես անապահով երեխաների կողքին: «Սոցիալապես անապահով երեխան դպրոցում որեւէ խոչընդոտ չպետք է ունենա», նշել է քաղաքապետը:

Մայրաքաղաքի տարբեր դպրոցների կարիքները հոգալու նպատակով՝ «Օգնիր դպրոցիդ» էլեկտրոնային կայքի միջոցով 633 մլն դրամի կամավոր նվիրատվություն է կատարվել:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Վերադարձնում են չնչին մասը, բայց ո՞ւմ

«Կարելի է եւ պետք է Թուրքիայից ակնկալել ու պահանջել ավելին»

«Ազգը» արդեն տեղեկացրել է Թուրքիայի վարչապետ Էրդողանի օգոստոսի 27-ից ուժի մեջ մտած հրամանագիրի մասին, որով նախատեսվում է Թուրքիայում ապրող քրիստոնեական համայնքներին վերադարձնել նրանցից 1936-1974-ի ընթացքում խլված կալվածքները: Երեկ այս կապակցությամբ հայտարարություն էր տարածել Ամերիկայի հայկական համագումարը: Որտեղ մասնավորապես նշվում է, թե հրամանագիրը արվեց Թուրքիայում մի շարք դրական զարգացումների հետ մեկտեղ, որոնց արդյունքում աճեց քաղաքացիական հսկողությունը Թուրքիայի կառավարության որոշ ճյուղերի նկատմամբ, որոնք մինչ այդ գտնվում էին բանակի վերահսկողության ներքո: Բացի սրանից՝ համագումարը նկատում է, որ այս բարեփոխումների մի մասը բխում է Թուրքիայի՝ ԵՄ-ի անդամ դառնալու ցանկությունից: «Սակայն այս հրամանագիրը ոչնչով չի շտկում Հայոց ցեղասպանության հետեւանքները: Թուրքիան չի ապացուցել, որ պատրաստ է հաղթահարել Հայոց ցեղասպանության հետեւանքները... Հրամանագիրը նաեւ ոչինչ չի անում Թուրքիայում ճարտարապետական ժառանգության պաշտպանության համար. անթիվ հուշարձաններ, որոնցից շատերը կրոնական բնույթի են, ենթարկվել են վանդալիզմի, արհամարհանքի, նույնիսկ ուղղակի ոչնչացման», նշված է հայտարարությունում: Իսկ՝ որպես վերջաբան՝ համագումարն ընդգծում է. «Կարելի է եւ հարկավոր է անել ավելին՝ Թուրքիայում փոքրամասնությունների խնդիրները լուծելու համար»:

Երեկ «Տեսակետ» մամուլի ակումբում թուրքագետներ **Հակոբ Չաֆրյանն** ու **Արսակ Շաֆարյանը**, անդրադառնալով Էրդողանի հրամանագրին, նշեցին, որ այն ընդամենը «ավազահատիկ է անապատում»: Շաֆարյանը նկատեց, որ հոկտեմբերին հրապարակվելու է Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու վերաբերյալ զեկույցը, հետեւաբար այնտեղ Անկարային խիստ կարեւոր է դրական հեղինակություն ձեռք բերելը. «Չմոռանանք նաեւ, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում մի շարք հայցեր կան՝ ընդդեմ Թուրքիայի, պահանջով վերադարձնել այդ երկում փոքրամասնությունների կալվածքները», ասաց Շաֆարյանը՝ արձանագրելով, որ այս հրամանագիրն ընդամենը Թուրքիայի վրա ԵՄ-ի գործադրած ճնշման արդյունքն է: Համաձայնելով Շաֆարյանի հետ՝ Հակոբ Չաֆրյանը նկատեց, որ անհասկանալի են մնում մի շարք հարցեր: Օրինակ՝ ինչպե՞ս եւ ո՞ւմ պետք է փոխհատուցի Թուրքիան: «Ոչ մահմեդական համայնքները Թուրքիայում իրավաբանական անձի կարգավիճակ չունեն, հետեւաբար՝ ո՞ւմ պետք է իրավաբանորեն վերադարձնի կալվածքները պետությունը: Բացի այդ՝ ի՞նչ տեսքով. օրինակ, Էրդողանը վերջերս հայտարարեց, որ հավանական է դրամով փոխհատուցումը», նկատեց Չաֆրյանը: Նշենք, որ 1936-1974-ը ազգային՝ հիմնականում քրիստոնյա համայնքներից բռնազավթած կալվածքները հիմնականում ներառում են Սամբուլ քաղաքն ու նրա մերձակայքը: Այսինքն խոսքը Արեւմտյան Հայաստանի վանքերի, վանական համալիրների կամ տարբեր աշխարհիկ կալվածքների մասին է: Ինչ վերաբերում է կոնկրետ գործին առնչություն ունեցող Սամբուլում գտնվող կալվածքներին, ապա, ինչպես նկատեց Շաֆարյանը, այսօր դրանց տեղերում խոշոր առեւտրային կենտրոններ են, այգիներ, տարբեր խոշոր շինություններ: Հետեւաբար՝ այս համայնապատկերում ավելի հասկանալի է թվում Էրդողանի վերոհիշյալ հայտարարությունը, որ պետությունը կարող է փոխհատուցել գումարով:

Ըստ էության՝ թուրքական պետության այս որոշումը կարելի է եւ ողջունել՝ հաշվի առնելով, որ Անկարան երբեք նման՝ թեկուզ չնչին քայլ չի կատարել՝ վերադարձնելու իր փոքրամասնությունների ունեցվածքի մի փոքրիկ մասը: Մյուս կողմից էլ՝ պետք է շատ չոգեւորվել, քանի որ սա ընդամենը «ավազահատիկ է անապատում», բացի այդ չի կատարվում Անկարայի բարի կամքով, այլ՝ արեւմտյան տարբեր կառույցների ու ուժերի պահանջ-թելադրանքով: Այսինքն՝ դժվար է ասել, նույն ճանապարհով կընթանա՞ Թուրքիան, եթե արեւմտյան այս ճնշումը դադարեցվի: Բացի սրանից՝ ինչպես նկատեց Շաֆարյանը՝ արեւելյան երկրներում սովորաբար երկար է տեւում գրված օրենքի գործադրումը. «Այսինքն հնարավոր է, որ այս հրամանագրով արձանագրված գործընթացը տեւի մի քանի տարի, եթե ոչ տասնամյակ», ասաց Շաֆարյանը:

Հետաքրքրական զուգադիպությամբ՝ Էրդողանի այս հրամանագիրը հրապարակվեց Մեջլիսի օրակարգից հայ-թուրքական արձանագրությունները հանելուց մի քանի օր անց: Այդ կապակցությամբ Չաֆրյանը նկատեց, որ Հայաստանի պահվածքն ու դիրքորոշումը բավական ճիշտ է. «Ըստ էության Հայաստանի նախագահի հայտարարությունը՝ արձանագրությունները առկախելու՝ մինչեւ Թուրքիան ինքը քայլեր կատարի, հենց նշանակում է, որ նախ՝ Հայաստանը իրավաբանորեն դուրս չի գալիս գործընթացից, հետո՝ ըստ էության հետ է կանչում իր ստորագրությունը, քանի որ, ստացվում է, Անկարան երկար ժամանակ չի կատարելու քայլեր»: Հիշեցնենք նաեւ օրեր առաջ ՀՀ նախագահի ելույթից մի հատված, որ նա ունեցավ հայ դիվանագետների ամենամյա հավաքի ընթացքում՝ օգոստոսի 30-ին: Այնտեղ նախագահը շեշտեց, որ հայ-թուրքական արձանագրությունները «բաց, անժամկետ հնարավորություն չեն...»: Այս կապակցությամբ Շաֆարյանը նկատեց, որ նույն արեւմտյան ճնշման ալիքի տակ, չի բացառվում, որ առաջիկա ամիսների ընթացքում, հաշվի առնելով, որ Հայաստանը կարող է ամբողջությամբ դուրս գալ գործընթացից, որի տարալման մեղավորի անունը բոլորը գիտեն, որ Թուրքիա է, նորից Մեջլիսի մեծ օրակարգ բերի արձանագրությունները՝ «իհարկե, առանց հարցը քննարկման դնելու, այլ զուտ այն պատճառով, որ միջազգային հանրությունը տեսնի, որ Թուրքիայում գործընթացը կասեցված չէ», նկատեց Շաֆարյանը:

Հ. ԱՓՅԱՆ

Իսրայելի դեսպանը Թուրքիայում տեղ չունի

1-ին էջից

Քննարկման մեկ այլ թեմա է, անշուշտ, ՄԱԿ-ի հանձնաժողովի այս պարադոքսալ արձանագրությունը: Երեկվա ասուլիսում Դավութօղլուն ընդգծեց. «Իմ երկիրը օրինական չի համարում Գազայի շրջափակումը Իսրայելի կողմից: ՄԱԿ-ի հանձնաժողովը ոչ ճիշտ եզրահանգման է եկել. Գազայի շրջափակումը, կրկնում եմ, անօրինական է. նավերին թույլ չեն տալիս մտնել նավահանգիստ»: Մինչեւ Պալմերի հանձնաժողովի եզրահանգումն էլ, սակայն, Թուրքիան Իսրայելին դիմեց վերջնագրով. «Իսրայելը պետք է ներողություն խնդրի «Մավի Մարմարա» նավի միջադեպի հետ կապված, այլապես Թուրքիան կարձագանքի խիստ կտրուկ»: Այս վերջնագրին Թել Ավիվը հերթական անգամ արձագանքեց, որ ինքը չի պատրաստվում ներողություն խնդրել Անկարայից, ավելին՝ Քնեսեթի պատգամավոր Դանի Դանոնը՝ «Լիկուդ» կուսակցությունից, հայտարարեց, որ «Թուրքիան պետք է ներողություն խնդրի Իսրայելից»:

Ի վերջո, այս ամենը, ինչպես վերը նշեցինք, հանգեցրեց Անկարայում Իսրայելի դեսպան Գաբի Լեւիի արտաքսմանը: Ընդ որում, հատկանշական է, Անկարան արտաքսեց հրեա դեսպանին այն ժամանակ, երբ վերջինիս Թուրքիայում դիվանագիտական լիազորությունների ժամկետի ավարտին մնում էր ընդամենը երկու շաբաթ, ինչը հատկապես ընդգծում է Անկարայի «խիստ կտրուկ արձագանքը»: Մնում է միայն սպասել՝ Թել Ավիվի, իսկ որն ավելի կարեւոր է այս պարագայում՝ աշխարհաքաղաքական իմաստով, ԱՄՆ-ի բարձր մակարդակի արձագանքներին: Վերջինս չի կարող անտարբեր հետեւել Մերձավոր Արեւելքում իր երկու կարեւորագույն դաշնակիցների խիստ սրված հարաբերություններին: Սակայն արդյո՞ք այս ամենը հենց ԱՄՆ-ի «նախագծով» չէ: Եվ ո՞վ ասաց, որ Վաշինգտոնը՝ «հեղափոխական գարուններից» հետո մանավանդ, նպատակահարմար է տեսնում՝ թուրք-իսրայելական բարեկամությունը, ուժեղ Թուրքիան՝ հատկապես:

Ինչ վերաբերում է Թել Ավիվին, ապա վերջինս երեկ, մինչ Դավութօղլուն «հատուկ ասուլիս կհրավիրեր», հանդես եկավ փոխնախարարի մակարդակով: Հրեական՝ «Արուց-7» ռադիոկայանի կայքի փոխանցմամբ՝ Նեգեւի եւ Գալիլիայի նախարարի տեղակալ Այուբ Կարան հայտարարեց. «Եթե Թուրքիան մեր դեսպանին արտաքսի, ինչը, փաստորեն կնշանակի մեր միջեւ դիվանագիտական հարաբերությունների դադարեցում, ապա իսրայելական կառավարությունը կբարձրացնի քուրդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հարցը՝ ընդհուպ թուրքական պետությունից քրդերի ամբողջական անջատում»: Օգոստոսի 24-ի համարում **«Ազգը»** ենթադրել էր, որ Թուրքիայում վերջին ժամանակներս «քրդական ակտիվության» մեղավորը կարող է լինել Իսրայելը, փաստորեն, հրեա փոխնախարարի խոսքերը սա ինչ-որ առումով հաստատում են: Բացի դրանից՝ հիշեցնենք Թուրքիայի Աշխատավորական կուսակցության ներկայացուցիչ Նուսրեթ Սենեմի խոսքերը. «ԱՄՆ-ը ցանկանում է պառակտել ու կործանել Թուրքիան...», եթե այս ամենին գումարենք նաեւ «Ջումհուրիեթի» վերլուծաբան Մեթին Քալենի ընդգծումը, թե «Արեւմուտքը ցանկանում է թաղել Լոզանն ու վերածնել Սեւրը՝ թուրքական տարածքում ստեղծելով անկախ Քուրդիստան ու Հայաստան», ապա թեկուզ միայն թուրք-իսրայելական հարաբերությունները բավական հետաքրքրական զարգացումներ են խոստանում... եւ ոչ միայն՝ Թուրքիային ու Իսրայելին:

«Լինսի» հիմնադրամի դպրոցաշինության ծրագրով վերակառուցում-հիմնանորոգումից հետո երեկ հանդիսավոր վերաբացվեց Շիրակի մարզում թվով երրորդ՝ Սարակաոի գյուղական միջնակարգ դպրոցի ընդարձակ ու լուսավոր կառույցը: Մարզի Նոր Կյանք եւ Արեւշատ համայնքների դպրոցների շենքերը նույն ծրագրով, ինչպես տեղեկացվել է, շարք էին մտել նախորդ օրը:

Սարակաոի դպրոցական նորամուտին ներկա էր եւ ելույթ ունեցավ ՀՀ վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: «Գյուղում մենք կառուցել եւ բացում ենք մի հիասքանչ դպրոց, որը, համոզված եմ, լինելու է Հայաստանի Հանրապետությունում լավագույններից մեկը,- ողջունելով ու շնորհավորելով հավաքվածներին՝ ասաց վարչապետը:- Դպրոցաշինությունը լինելու է կառավարության առաջնահերթ խնդիրներից մեկը: Որովհետեւ նմանատիպ հիասքանչ կրթօջախները նոր շունչ են հաղորդում նաեւ գյուղական կյանքին ու ապագայի նկատմամբ ձեւավորում են վստահություն, ինչն այսօր ամենակարեւորն է Հայաստանում»:

Ժամանակակից պայմաններով աչքի ընկնող, 240 աշակերտական տեղով դպրոցական շենքում այսօր սովորում է 116 երեխա, ինչը եւս մարզի բազմաթիվ գյուղերի համար այսօր պարզապես հեռավոր երազանք կարող է լինել: Լավ պայմաններ են ստեղծված նաեւ այստեղ նոր բացված նախակրթարան ընդունված սարակաոցի 28 փոքրիկների համար:

Ըստ Շիրակի մարզպետարանի տրամադրած տվյալների՝ մարզում այս տարի դպրոցաշինության համար տարբեր աղբյուրներից ընդհանուր առմամբ հատկացվել է 3,53 մլրդ դրամ, որի հաշվին իրականացվել եւ իրականացվում են կրթական ոլորտի օբյեկտների կառուցման, հիմնանորոգման, վերանորոգման եւ այլ աշխատանքներ: Հանձնված հիշյալ երեք դպրոցներից եւ Գյումրու «Օյունջյան» դպրոց-վարժարանի վերջին մասնաշենքից բացի մեկական նոր դպրոցական շենքեր են կառուցվում Գյումրիում եւ մարզի 3 գյուղերում: Թվով 6 դպրոցներում իրականացվում են կաթսայատների կառուցման եւ ջեռուցման համակարգերի անցկացման, 9-ում՝ կտուրների, հատակների, սանհանգույցների եւ այլ մասնակի նորոգման աշխատանքներ:

Գ. Ս.

ՀՇԳՐՏՈՒՄ

Օգտագործենք ՀՀ եւ ԼՂՀ ճիշտ քարտեզ

Մի խումբ հասարակական կազմակերպություններ («Ժառանգ» ՀԿ, «Արմատ» ակումբ, «Հայրենապաշտ» ՀԿ, «Հայֆոն», Times.am լրատվական գործակալություն, «Voskanapat» վերլուծական կենտրոն, «Ռազմավարական մշակումների կենտրոն» ՀԿ) որոշել են այս օրը նշել որպես Հայաստանի եւ Արցախի միասնական քարտեզի օր: Ըստ նախաձեռնող խմբի անունից հաղորդագրություն տարածած Աննա Եղիազարյանի՝ նախաձեռնության կարիքը զգացվել է այն պատճառով, որ հայոց պետականության ճիշտ սահմանները չճանաչելը համատարած երեւույթ է Հայաստանում: Նախաձեռնող խումբն այսօր իրազեկման գործողություններ է իրականացնելու Երեւանում՝ հիշեցնելով Արցախի եւ Հայաստանի իրական սահմանների մասին եւ փորձելով չեզոքացնել շատերի ուղեղներում դաջված եւ վաղուց գոյություն չունեցող եւ ԽՍՀՄ փլուզմամբ պատմության գիրկն անցած Հայկական ԽՍՀ «բարակ վզով օրիորդին» եւ ԼՂԻՄ ուրվագիծը: Սոցիալական ցանցերում այժմ ձեւավորվել են խմբեր, որոնք քննարկում են ճիշտ սահմաններով քարտեզների տարածումն ու քննարկումը, հատկապես որ Հայաստանում գործող մի շարք կազմակերպություններ եւ նույնիսկ պետական հաստատություններ դեռեւս օգտագործում են ոչ ճիշտ՝ վաղուց գոյություն չունեցող ԼՂԻՄ սահմաններով քարտեզ: Ա. Եղիազարյանը նշել էր, որ ՀՀ հեռուստաընկերության եթերում (սա պատգամավոր Լարիսա Ալավերդյանն արդեն մի քանի տարի է ասում է) եւ գյուղնախարարության կայքում հին ԼՂԻՄ-ի քարտեզն է ներկայացված: Այսօր նախաձեռնության հեղինակները ճիշտ քարտեզներ են նվիրելու դպրոցականներին, իսկ համացանցում այդպիսի քարտեզների տարածումը թափով ընթանում է: Նախաձեռնողները կոչ են անում բոլորին՝ միանալ նախաձեռնությանն ու կիրառել Հայաստանի եւ Արցախի ճիշտ քարտեզներ:



Ի դեպ, երեկ «Ճիշտ քարտեզ» նախաձեռնությանն արձագանքել է ՀՀ հեռուստաընկերությունը՝ հավաստիացնելով, որ ներկա դրությամբ հենց դրանով են զբաղվում (Լարիսա Ալավերդյանի ականջը կանչի՝ մարդը երկար զբաղվում էր, օրինակներ էլ բերում էր ու ՀՀ-ին էլ մատնացույց էր անում, բայց բան դուրս չեկավ, ֆեյսբուքահայերը մեկ-երկուս խոսեցին ու... հաղթեցին»: Մի խոսքով՝ նախաձեռնության ներկայացուցիչ Հարություն Ճաստյանը երեկ եղել է ՀՀ-ում, որտեղ նրան ընդունել է հեռուստաընկերության ներկայացուցիչ Կարեն Հակոբյանը եւ խոստացել մինչեւ սեպտեմբերի վերջ խնդիրը լուծել: Սակայն երեկ ցերեկվա դրությամբ դեռ գյուղնախարարությունը չէր արձագանքել կոչին:

Մի խոսքով, սովորական հայեր, լսեք ֆեյսբուքահայերին ու ճիշտ քարտեզ օգտագործեք:

Մ. Խ.

ՇԻՐԱԿ

Եվս մեկ գեղեցիկ դպրոցական շենք՝ Սարակաոում

Ազգային միասնության գաղափարը՝ Հանրաքեության հրաքարակի հուշակոթողի հիմքում

Ճարտարապետ Կորյուն Հակոբյանի նախագծի առիթով

Հանրաքեության հրաքարակի ճարտարապետական միջավայրը քեական հասարակական մեր կյանքի գլխավոր ասրիբունների խտացված արտահայտությունն է: Կառույցների՝ աջ ու ահյակ կիսաբոլորաձեւ թեւերի «հանդիքման վայրում», որտեղ մի ժամանակ քրոլետարիատի տխրահռչակ առաջնորդի արձանն էր, եւ որը համանուն գաղափարախոսության խորտակման հետ անվերադարձ հեռացվեց հրաքարակից, փոխեց հրաքարակի ոչ միայն ճարտարապետական, այլեւ ամբողջ միջավայրը (այն ազատագրվեց, մաքրվեց): Արդեն շուրջ 20 տարի արձանի տեղը թափուր է, ներկայումս ծաղիկներ են, եւ վատ չէ, կարծես: Բայցեւայնքես նույն վայրում Հայաստանի 3-րդ Հանրաքեությունը խոհրդանշող հուշակոթողի տեղադրման գաղափարը մշտաքես եղել է եւ այսօր էլ շրջանառու է՝ հասարակության, մտավորականության, իշխանական շրջանակներում. այն իրագործելու համար նախընթաց չորս հանրաքեական մրցույթներում ներկայացված նախագծերից որեւէ մեկը փաստորեն չբավարարեց պահանջվող չափանիշները:

Օգոստոսի սկզբներից ընթացող 5-րդ մրցույթին ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտում ներկայացված են մի շարք նախագծեր՝ դրված հանրային ցուցադրության: Հանրաքեության հրաքարակի հուշարձանային համալիրի մրցութային նախագծերը սակավաթիվ են, եղածների մեջ ընդգծված են կամարային լուծումներ, սյունաշար-տաճարատիպ կոմպոզիցիաներ, հուշասյուներ՝ տարբեր խոհրդանիշներով (զանգեր, աղավնի, գունդ եւ այլն):

Սրահի ձախակողմյան պատի առաջին ցուցադրությունը նախագծային էսքիզի մի քանի տարբերակ է ներկայացնում. հեղինակը՝ ճարտարապետ Կորյուն Հակոբյանը, առաջին մասնակցությունն է ունենում այս մրցույթին: Նրա ներկայացրած նախագիծը՝ հորիզոնական գրանիտե հարթակի (40 մ) վրա վեր խոյացող գրանիտե ստելլայով հուշակոթողը (30 մ) խոհրդանշում է մեր պետականության նոր ժամանակների գաղափարաբանությունը: Որպես ճարտարապետական համալիր՝ դասական ոճի մեջ, ապագա կառույցը զուսպ ձեւերի համադրություն է՝ ինչ-որ տեղ խստակյաց, բայց հաստատակամություն ներշնչող: Քարի ուղղահայաց եւ հորիզոնականի լուծումը հաստատ տեղում կենտրոնացնում է ճարտարապետական մտահղացման հիմնական՝ ազգային միաբանության գաղափարը, որն արտահայտվում է արձանախմբի միջոցով, այն է՝ պետության, մտավորականության եւ ժողովրդի միասնականության, այլ կերպ՝ ներդաշնակ հասարակության բաղձալի իրականացման: Քանդակախումբը նախագծային վիճակում է եւ լիովին մշակված չէ, առայժմ միայն մտահղացում է եւ որոշակվելու է քանդակագործական մրցույթով: Կառույցի կանոնիկ, առանց ծանրաբեռնող դետալների պարզ լուծումը՝ հստակ, հարթ ձեւերը, կարծում ենք, շահեկանորեն կլրացվեն արձանախմբի գեղագիտական ճիշտ մոտեցմամբ, ինչը ենթադրում է առավել կենդանի, առաձգական եւ ճկուն արտահայտչականություն:

Կոթողի հորիզոնական շերտը ներկայացնում է հարթակ՝ նախորոսություն քարագործական մեր արվեստի նկատմամբ, դրանք իրապես քարտաշագործական գլուխգործոցներ էին:

Այդ ընթացքում բազմաթիվ էսքիզներ եմ արել: Փորձում էի մարմնավորել հայ ժողովրդի վերածնունդը խորհրդանշող գաղափար, մտահղացել էի տոնախմբությունների հարթակ եւ հայ ժողովրդի վերածննդի խորհրդանիշ-հուշարձանը՝ փյունիկյան թռչունի տեսքով՝ բարձր, խաչաձեւ թեւերով: Ունեցել եմ նաեւ ծիածանի, եռագույն կամարի գաղափարն արտահայտող մի շարք էսքիզներ: Սակայն որեւէ նյութից, առավելապես քարից ծիածան հնարավոր չէ ստանալ, դա բնության, արեւի լույսի մենաշնորհն է: Անընդհատ նոր մտահղացումներ, նոր էսքիզներ էին ծնվում, սակայն դրանցից ոչ մեկը ինձ չէր բավարարում: Մի օր պատահաբար հեռուստատեսությամբ լսեցի հայտնի երգը՝ «Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավատական ուժի մեջ է» եւ «Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում»: Մյուս երկուսը համաժողովրդական հարցման արդյունքում է որոշվելու, այգու կողմից խաչապատկերի վերեւում՝ սուրբգրային, քրիստոնեական պատգամը մեր հավատարմության առհավատչյան է Հայ առաքելական եկեղեցուն: Ստելլայի վերեւի փարոսը՝ Հայաստանը որպես համայն հայության հանգրվանի գաղափարական մարմնավորումն է:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հ. Գ.- Կորյուն Հակոբյանն այս նախագիծը նախապես ներկայացրել է անվանի մի քանի ճարտարապետների, իր ընկերներին՝ գնահատման, կարծիքների, խորհուրդների ակնկալիքով եւ շահեկանորեն օգտվել որոշներից: Մասնագիտական կարծիքները տարբեր են, ինչպես ինքն է ասում՝ դրանց մեջ նաեւ «նախկինը հիշեցնող եւ կամ կոմունիստականի շունչ ունեցող»: Այս վերջինի առիթով ճարտարապետը որոշակի վերապահում ունի. «Կառույցի կոմպոզիցիան թելադրված է միջավայրով: Նախկին կոթողի նախագիծը շահել է համամիութենական մրցույթում, որի կոմպոզիցիան, ձեւը ոչ թե կոմունիստական քաղաքականության տեսանկյունից էր թելադրված, այլ՝ քաղաքաշինության: Եթե, օրինակ, ժամանակներն այլ լինեին եւ այդ վայրում Տիգրան Մեծի արձանը դրվեր, միեւնույն քաղաքաշինական լուծումն էր պահանջվելու: Եվ եթե նախկին արձանը տեղադրվեր օպերայի խաչմերուկում, չէր կարող նախկինի ձեւը ունենալ, կեսային պիտի լիներ:

Իմ նախագծում տրիբունան՝ որպես կոմունիստական քաղաքականության ատրիբուտ, վերացված է, որը ֆունկցիոնալ առումով իմաստազուրկ է, նախատեսված է հավաքների տրիբունա՝ ծածանվող եռագույնով, ներքնահարկում նախատեսված է նկուղ ծառայողական սենյակների համար»:

Վերջին 3 տարիների աշխատանքային ակտիվությունը ճարտարապետին բազմաթիվ նախագծերի ծնունդ է տվել, Կորյուն Հակոբյանն աստիճանաբար է հանգել վերջին տարբերակին: «Նախկին հուշակոթողի հարթակի քարերն են ինձ ստիպել, դրանք նորից գործածելու մղումը թելադրեց կոթողի այսպիսի կոմպոզիցիան: Այնպես որ, քարերի օգտագործման հեղինակն եմ ես: Կոմունիստականի շունչ այս նախագծում չկա, որովհետեւ գաղափարախոսությունը միանգամայն տարբեր է. պետական-ազգային մտածողություն է հիմքում դրված:

Հանոզված եմ՝ Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնական հուշարձանը ճարտարապետորեն կատարյալ լուծում պիտի ունենա եւ արտահայտված լինի ամենաբարձր չափանիշներով՝ քաղաքաշինորեն գրագետ, գաղափարապես ազդեցիկ, գեղագիտորեն բարձրարվեստ: Հեղինակի անձը կարեւոր չէ, եթե որեւէ մեկը ներկայացնի ավելի լավ նախագիծ, առաջինը ինքս կենտրոնավորեմ. Հանրաքեության հրաքարակի համար պիտի ընտրվի լավագույն նախագիծը»:

Մամիկոնյանները չեն օժանդակելու իրենց նորոգած եկեղեցուն

Հուլիսի 30-ին օծվեց Քաջարանի Վերին Հանդի Սուրբ Աստվածածին եկեղեցին, որը վերակառուցել էին Մամիկոնյան եւ Մեժլում Հակոբյանները, սակայն վերակառուցողներն իրենք ներկա չգտնվեցին օծման արարողությանը, հավանաբար պատճառն այն էր, որ Մամիկոնյանը հակասության մեջ է Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի հետ:

Հակամարտությունը սրանով չավարտվեց: Եկեղեցին վերանորոգողները զլացան իրենց «համեստ» կարողությունից գոնե եկեղեցական սպասք ձեռք բերել Սուրբ Աստվածածին եկեղեցու համար, որտեղ ժամանակին իրենց պաղերն են եղել հոգեւորական: Մենք այցելեցինք Սուրբ Աստվածածին եկեղեցի եւ հանդիպեցինք եկեղեցու հոգեւոր հովիվ տեր Ահարոնին: Մեր հարցադրմանը, թե ինչո՞ւ եկեղեցական սպասք չկա, տեր հայրը պատասխանեց. «Շատ շուտով ամեն ինչ կլինի. ես դիմել եմ Հայաստանում եւ Սփյուռքում բնակվող իմ ընկերներին, որոնք հանձն են առել լծվել այս օրհնաբեր գործին: Արդեն պատվիրված են եկեղեցու վարագույրը, սուրբ սեղանի ծածկոցները, խորդանոցի ծածկոցները, մնացածը ընթացքի մեջ է»:

«Իսկ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը, մասնավորապես գլխավոր տնօրեն Մամիկոնյանը չի՞ օժանդակում»: Տեր հայրը պատասխանեց. «Դիմել եմ, բայց մերժում եմ ստացել, անգամ ծրագիր ունեմ առաջիկա 9 ամիսների ընթացքում դպրոցի մոտ 900 աշակերտների եւ ուսուցիչների մկրտելու, երրորդ օրը նրանց տուն գնալու, մյուռոնից հանելու եւ տնօրինների կարգ կատարելու, եւ բարերարի անունից մեկ Աստվածաշունչ նվիրելու, սա նաեւ բարերարի պատիվն է: Ուր որ քահանայի ոտքը դիպչի, այնտեղ աղանդավորը երբեք մուտք չի գործի. ինչ-որ չափով նաեւ մեր մեղքն է, որ այսքան աղանդավոր կա: Մամիկոնյանը ձեռքերը լվացել է, մնում է Սյունիքի մարզպետին դիմեմ, ճար չկա, ի՞նչ անեմ, համայնքային կյանքի պիտի ստեղծե՞մ, թե՞ ոչ: Աղանդը սկսել է մարդ ուտել, իսկ մենք ափսոսում ենք մեր ազգի հոգեւոր դաստիարակության համար մի բարի գործ կատարել: Քահանան Աստծո ծառան է եւ եկեղեցու սպասավորը, եւ ամենեւին էլ հաճելի չէ կամա թե ակամա ներքաշվել ինչ-որ ճղճիմ հարաբերությունների մեջ»: Մեր խոսակցության ընթացքում ակնհայտ էր, որ քահանան շատ նեղված էր:

Նմանատիպ դեպք արդեն եղել է Քաջարանում, երբ քաղաքապետ Վարդան Գեւորգյանը Քաջարանի թիվ երկրորդ մանկապարտեզը վերանորոգելու համար ստիպված է եղել դիմել ՄԱԿ-ի հայաստանյան դեսպանին, որի աջակցությամբ էլ նախակրթարանը վերանորոգվել է, որովհետեւ դարձյալ կոմբինատի տնօրենը ձեռքերը լվացել էր: Շատ ցավալի է, որ մեր տունը վերանորոգելու համար ստիպված ենք այսուայնկողմ ընկնել, մինչդեռ հնարավոր է, որ ինքներս անենք: Թե ինչքան կտեւի մարզպետ-Մամիկոնյան հակամարտությունը, անհայտ է, բայց որ այս հակամարտությունից տուժում է ժողովուրդը, ակնհայտ է:

ԳԱԲԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

***Խմբ. կողմից.-* Եկեղեցի կամ դպրոց կառուցելը սուրբ գործ է, այսինքն՝ պահանջում է ոխը, քենը եւ նման ամեն բան թողնել մի կողմ եւ անել բարերարությունը ամեն գնով: Պրն Մամիկոնյանը մեկ անգամ չէ, որ նպաստել է ազգանվեր ու հայրենանվեր գործերի, որոնք միտված են ապագային: Մարզպետ թե այլ պաշտոնյա՝ ժամանակավոր են:**

Լիբիայի վարչապետն անցել է ապստամբների կողմը

Փարիզյան հանդիպման մասնակիցները ապաստաներին 15 մլրդ դոլար

Մուամմար Քադդաֆիի տապալված կառավարության վարչապետ Բաղդադի Ալի ալ Մահմուդին անցել է ապստամբների կողմը: Այդ մասին հաղորդում է «Ալ Արաբիա» հեռուստալիքը: Վերջինիս ցված հարցազրույցում ալ Մահմուդին հայտարարել է, որ ինքը կարող է հաստատել ապստամբների կառավարության՝ Անցումային ազգային խորհրդի հետ: Ընդսմին, նախկին վարչապետը ընդգծել է, որ ինքը Լիբիայի տարածքում է:

Ավելի վաղ տեղեկություններ էին ստացվել, թե ալ Մահմուդին իբր Թունիս է փախել այն բանից հետո, երբ ապստամբները սկսել են Տրիպոլիի գրոհը:

Անցյալում ալ Մահմուդին խանգարում էր եկել երկրում իրադրության խաղաղ կարգավորմանն ուղղված նախաձեռնություններով: Դեռ մայիսին նա հակամարտող կողմերին առաջարկել էր անհապաղ դադարեցնել կրակը, բանակցություն սկսել եւ նախապատրաստել նոր սահմանադրության նախագիծ: CNN հեռուստաընկերության տվյալներով, օգոստոսի կեսերին ալ Մահմուդին սկսել էր բանակցել ապստամբների հետ:

Միաժամանակ հաղորդվում է, որ Փարիզում սեպտեմբերի 1-ին վեց տասնյակ պետությունների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ մասնակցել են «Լիբիայի բարեկամների» հանդիպմանը, որի ընթացքում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը հայտարարել է, թե դաշինքի ռազմական գործողությունը Լիբիայում կշարունակվի «որքան հարկ լինի»: Հանդիպման ժամանակ ելույթ է ունեցել նաեւ Աֆրիկյան միության ներկայացուցիչ Ժան Պինգը: Նա հայտարարել է, որ իր կազմակերպությունը առայժմ պատրաստ չէ ճանաչելու Անցումային ազգային խորհրդի օրինականությունը: Ֆրանսպրես գործակալությունը ընդգծում է, որ Աֆրիկյան միության մասնակիցները երկյուղներ ունեն, որ Քադդաֆիի վարչակարգի տապալումից հետո հալածանքներ կծավալվեն սեւամորթ ներգաղթյալների դեմ:

Փարիզյան հանդիպման ավարտից հետո օտարերկրյա բանկերում Քադդաֆիի եւ նրա մերձավորների հաշիվներում սառեցված գումարներից ապաշրջափակվել է 15 մլրդ դոլար: Այդ փողերը Լիբիայի նոր իշխանություններին պետք է օգնեն վերականգնելու երկիրը քաղաքացիական պատերազմից հետո:

Ինչ վերաբերում է Մուամմար Քադդաֆիին, որի գտնվելու վայրը ստույգ հայտնի չէ, սեպտեմբերի 1-ի երեկոյան նա հեռական ձայնագրված ելույթով դիմել է Լիբիայի բնակիչներին: Նրա ելույթը ուղիղ եթերում հեռարձակվել է BBC News, Sky News եւ «Ալ Ջազիրա» հեռուստալիքներով: Քադդաֆին իր ելույթում կողմնակիցներին կոչ է արել «սկսել երկարատեւ պարտիզանական պատերազմ»: Նրա խոսքերով, զինված ցեղերը պարտավոր են ամենուրեք ոչնչացնել «դավաճաններին եւ գաղութարարներին»:

Պ. Ք.

50 ամենաազդեցիկ անձանց ցանկում առաջինը Յուկերբերգն է

Vanity Fair հանդեսը հրապարակել է աշխարհի 50 ամենաազդեցիկ մարդկանց ցանկը, որտեղ 1-ին տեղն զբաղեցնում է Facebook սոցիալական ցանցի հիմնադիր Մարկ Յուկերբերգը: Հանդեսը նշում է, որ լիակատար հիմունքով կարելի է ակնկալել 2012-ին. Facebook-ի բաժնետոմսերի մուտքը ֆոնդային շուկա: 27-ամյա Մակը ամենաերիտասարդն է ցանկի բոլոր տարիների առաջատարների մեջ, ընդգծում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Երկրորդ տեղը կիսում են Google որոնողական համակարգի հիմնադիրներ Սերգեյ Բրինը եւ Լարրի Փեյջը (անցյալ տարի նրանք 3-րդ տեղում էին): Երրորդ տեղում է Amazon ընկերության ղեկավար Ջեֆ Բեզոսը:

Առաջին տասնյակում հաջորդ տեղերն զբաղեցնում են Apple-ի նոր ղեկավար Թիմ Կուկը եւ նրա ծառայակից Ջոնաթան Այվը, Ջեկ Դորսին (Twitter), Մարկ Անդրեսսենը եւ Բեն Հորովիցը («Անդրեսսեն-Հորովից» հիմնադրամ), Ռիդ Հասթինգսը (Netglix), Ջոն Լասեսերը (Pixar եւ Walt Disney ստուդիա), երգչուհի Լեդի Գագան եւ Դեն Դոկտորոֆը (Bloomberg):

Անցյալ տարվա համեմատությամբ ցանկում երիտասարդները շատացել են. 50 անձանցից 15-ի տարիքը 40-ից ցածր է: Ցանկում կան 14 միլիարդատեր եւ Սթանֆորդի համալսարանի (Կալիֆոռնիա) 8 շրջանավարտ:

Պ. Ք.

ՄԱԿ-ն ավարտել է «Ազատության նավատորմիղի» գործի քննությունը

Իսրայելական հատուկ ջոկատի կողմից «Ազատության նավատորմիղի» կալանման գործը քննող ՄԱԿ-ի հանձնաժողովը ավարտել է իր աշխատանքը: Սեպտեմբերի 2-ին հրապարակվել է 105-էջանոց զեկուցագիր, որտեղ գնահատական է տրվում հակամարտության երկու կողմերի՝ Իսրայելի եւ Թուրքիայի գործողություններին: Զեկուցագրի որոշ մանրամասնություններ հաղորդում է «Նյու Յորք թայմս» թերթը:

Հանձնաժողովը եզրակացրել է, որ թուրքական «Մավի Մարմարա» նավ ներխուժած իսրայելցի զինծառայողները ստիպված են եղել ուժ գործադրել ինքնապաշտպանության նպատակով, քանի որ «մի խումբ ուղեւորներ ցույց են տվել կազմակերպված զինված դիմադրություն»: Հանձնաժողովը Իսրայելի գործողությունները, այնուամենայնիվ, համարում է «չափազանցված եւ չհիմնավորված», իսկ ուղեւորների հետ զինծառայողների վերաբերմունքը՝ վիրավորական:

Մյուս կողմից, ՄԱԿ-ը օրինական է համարում Իսրայելի կողմից Գազայի հատվածի շրջափակումը, որի ճեղքմանն էին ուղղված «նավատորմիղի» գործողությունները: Զեկուցագրի հեղինակների կարծիքով ուղեւորների մեծամասնության խաղաղասիրությունն ակնհայտ է, բայց չի կարելի նույնն ասել ձեռնարկման կազմակերպչի՝ թուրքական IHH մարդասիրական կազմակերպության մասին: Վերջինիս գործողությունները գնահատվում են «հախուռն», իսկ նպատակները «հարուցում են լուրջ հարցեր»:

Զեկուցագրի հեղինակները Իսրայելին առաջարկում են ափսոսանքի հայտնել «նավատորմիղի» կալանման ժամանակ Թուրքիայի քաղաքացիների սպանության առնչությամբ եւ փոխհատուցում վճարել զոհերի ընտանիքներին: Թուրքիան Իսրայելից պահանջում է ներողություն խնդրել, մինչդեռ իսրայելական կողմը մտադիր չէ դա անել (այդ մասին ավելի վաղ հայտարարել էր վարչապետ Բենիամին Նաթանյահուն):

«Ազատության նավատորմիղի» կալանումը տեղի ունեցավ 2010-ի մայիսի լույս 31-ի գիշերը: Իսրայելական հատուկ ջոկատները կալանեցին մի խումբ նավեր, որոնք, խախտելով Գազայի հատվածի ծովային շրջափակումը, փորձում էին այնտեղ հասցնել մարդասիրական օգնության բեռներ: Գրոհի ժամանակ «Մավի Մարմարա» նավի վրա սպանվեց 9 մարդ, որից 8-ը Թուրքիայի քաղաքացի էր, վիրավորվեցին 30 անձինք:

Պ. Ք.

ՄԻՆՍԿ

Լուկաշենկոն խոստանում է արձակել բոլոր քաղբանտարկյալներին

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն խոստանում է մինչեւ 2011-ի հոկտեմբերի կեսը ազատ արձակել երկրի բոլոր քաղբանտարկյալներին: Այդ մասին հաղորդում է «Ռոյթեր» գործակալությունը:

Գործակալության տրամադրության տակ է Բուլղարիայի արտգործնախարար Նիկոլայ Մլադենովի նամակը՝ ուղղված Եվրամիության արտաքին քաղաքականության ղեկավար Քեթրին Էշթոնին եւ ԵՄ արտգործնախարարներին: Մլադենովի խոսքերով, որը օգոստոսի վերջերին հանդիպում է ունեցել Լուկաշենկոյի հետ, Բելառուսի նախագահը խոստացել է 1,5 ամսվա ընթացքում ազատ արձակել բանտարկված ընդդիմադիր ակտիվիստներին: Նաեւ նախատեսվում է ընդդիմության հետ կլոր սեղաններ կազմակերպել երկրի զարգացման հարցերի շուրջը:

Մլադենովը մանրամասնել է, որ Եվրամիության հետ հարաբերությունները բարելավելու Լուկաշենկոյի ցանկությունը, ըստ երեւույթին, կապված է ԵՄ պատժամիջոցների հետ, որոնք 2010-ի դեկտեմբերին Մինսկում տեղի ունեցած անկարգություններից հետո իրականացված քաղաքական բռնարարքների պատասխանն են:

«Ռոյթեր»-ի դիվանագիտական աղբյուրը նշել է, որ Լուկաշենկոն որոշեց Եվրամիության հետ բանակցություններում Բուլղարիայի՝ որպես միջնորդի ծառայություններից օգտվեն այն բանից հետո, երբ Իտալիան եւ Լիտվան հրաժարվեցին կատարել նույն դերը:

Լուկաշենկոյի մամլո ծառայության հաղորդագրության համաձայն, սեպտեմբերի 1-ին նախագահն արդեն ներում է շնորհել դեկտեմբերյան հուզումների 4 մասնակիցների:

Մամլո ծառայության տվյալներով, Լուկաշենկոն ներման հրամանագիրը ստորագրել է ընդդիմադիրների համապատասխան խնդրագրերի քննարկումից հետո: Որոշումն ընդունվել է այն նկատառումով, որ դատապարտյալները «հայտարարել են զղջման, մեղքի ընդունման, սեփական գործողությունների հակահրավական բնույթի գիտակցման եւ հետագայում Բելառուսի օրենսդրությունը խստիվ պահպանելու պատրաստակամության մասին»:

Պ. Ք.

Rosneft-ը Արկտիկան կյուրացնի ExxonMobil-ի հետ

Ռուսական Rosneft նավթային ընկերությունը արկտիկական ծանծաղուտը կյուրացնի ամերիկյան ExxonMobil-ի հետ: Երկկողմ ռազմավարական համագործակցության համաձայնագիրը ստորագրվել է ՌԴ-ի Սոչի քաղաքում, հաղորդում է BBC-ն:

Ստորագրմանը նախորդել էր Rosneft-ի ղեկավար Էդուարդ Խուդայնատովի եւ ExxonMobil Development-ի նախագահ Նիլ Դաֆֆինի հանդիպումը ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինի հետ: Վերջինիս խոսքերով, ռուսական ընկերությունը համաձայնագրի շնորհիվ ոչ միայն կգործի ՌԴ արկտիկական եւ խորջրյա ծանծաղուտում, այլեւ կմասնակցի ExxonMobil-ի նախագծերին, այդ թվում՝ Տեխասում եւ Մեքսիկական ծոցում:

Ամերիկյան ընկերությունը հայտարարել է, որ համաձայնագրով նախատեսվում է 3,2 մլրդ դոլար ներդրումներ կատարել Rosneft-ի որոշ տեղամասերի երկրախուզության եւ յուրացման մեջ:

Խոսքը Կարայի ծովի որոշ հատվածների եւ Սեւ ծովի Տուապսեի հատվածի մասին է: ExxonMobil-ը այդ շրջանները համարում է նավթի ու գազի պարունակությամբ համաշխարհային ծանծաղուտի առավել խոստումնալի տեղամասեր:

ԱՄՆ-ում ExxonMobil-ի երկրախուզական մի շարք նախագծերում բաժին ստանալու հնարավորությունից բացի, Rosneft-ը համաձայնագրի շնորհիվ կկարողանա մասնակցել ուրիշ երկրներում ամերիկյան ընկերության նախագծերին:

2011-ի հունվարին Rosneft-ը համաձայնագիր էր կնքել բրիտանական BP ընկերության հետ: Այդ ռազմավարական գործընկերությունը ենթադրում էր բաժնետոմսերի փոխանակում եւ Արկտիկայի համատեղ յուրացում:

BP-ի հետ համաձայնագիրը մշակվել էր ՌԴ փոխվարչապետ Իգոր Սեչինի ակտիվ մասնակցությամբ եւ արժանացել էր Պուտինի հավանությանը: Սակայն գործարքը խափանվել էր THK-BP համատեղ ընկերությունում ռուսական գործընկերոջ՝ AAR կոնսորցիումի հակազդեցության պատճառով, որը մի քանի ամիս շրջափակել էր բաժնետոմսերի փոխանակման գործարքը: Rosneft պետական ընկերությունը գործարքը չեղյալ էր հայտարարել AAR-ի անընդունելի պայմանների պատճառով:

Ըստ փորձագետների, Rosneft-ին ձեռնտու չէր ինչպես AAR-ի պահանջած բաժնեմասը, այնպես էլ այն, որ բաժնետոմսերի փոխանակման շնորհիվ AAR-ը կդառնա ՌԴ խոշորագույն նավթային ընկերության բաժնետեր, իսկ Rosneft-ի տնօրենների խորհրդում կարող է հայտնվել AAR-ի ներկայացուցիչ: Ի վերջո մայիսի կեսերին Rosneft-ը հրաժարվել էր երկարաձգել BP-ի հետ բաժնետոմսերի փոխանակման գործարքի կնքման ժամկետը:

Այսօր կբացվի Կամերային թատրոնի 30-րդ թատերաշրջանը



Թատերասերների սիրած Երեւանի պետական կամերային թատրոնը երեք տասնամյակի պատմություն ունի: Անցած այդ ժամանակաշրջանում թատրոնի հիմնադիր եւ գեղարվեստական ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, բեմադրիչ Արա Երնջակյանի ջանքերով մի քանի սերունդներ են nsf դրել հայ թատրոն: Այսօր արդեն հստակ կարող ենք ասել, որ Կամերային թատրոնը դարձել է յուրօրինակ դարբնոց, որտեղ մասնագիտական փորձ ու հմտություն են ձեռք բերում շատ երիտասարդ բեմադրիչներ, ռեժիսորներ, դերասաններ եւ արվեստի նվիրյալներ: Թատրոնն անցած 30 տարիներին 100-ից ավելի նոր ներկայացումներ է հանձնել հանդիսատեսի դատին ու մշտապես արժանացել վերջիններիս բարձր գնահատականին եւ ընդունելությանը:

Այսօր, սեպտեմբերի 3-ին Կամերային թատրոնն իր դռները կրկին կբացի հանդիսականների առջեւ Արա Երնջակյանի «Կաբարե» ներկայացումով, որով էլ կազդարարվի 30-րդ թատերաշրջանի բացումը: Այդ առիթով **«Ազգ»**-ը հյուրընկալվեց Արա Երնջակյանին եւ տեղեկացավ, թե թատերաշրջանի ընթացքում ի՞նչ նոր բեմադրություններ կներկայացվեն հանդիսատեսին: Թատրոնը ծրագրել է երեք նոր ներկայացումների առաջնախաղ, Արա Երնջակյանի «Ճանապարհ դեպի Եգիպտոս» պիեսը եւ «Ժաննա դ'Արկի առեղծվածը» (բեմադրիչ Արշալույս Հարությունյան), որոնք կկայանան մեկ ամիս հետո: Իսկ թե ինչու մեկ ամսից, քանզի Կամերային թատրոնը մեկ ամսով հրավիրվել է ԱՄՆ, «ASA-ART» կորպորացիայի կողմից, մասնակցելու «Աշխարհի թատրոնները» միջազգային փառատոնին: Հոկտեմբերի 9-ին մեծ հանդիսավորությամբ Լոս Անջելեսում կմեկնարկի փառատոնը եւ կտեւի մեկ ամիս: Այդ մեկ ամսվա ընթացքում Կամերայինը թատերասերներին կներկայացնի երեք ներկայացում՝ Արա Երնջակյանի (պիեսի հեղինակ եւ բեմադրիչ) «Իզեն», «Կառավարական համերգ» եւ Լեոնարդ Հերշի «Ի՞նչ տարբերություն, թե ո՞ւմ հետ» (բեմադրիչ՝ Լուսինե Երնջակյան): Բացի Լոս Անջելեսից, նախատեսվում է նաեւ ներկայացումներ Բոստոնում եւ Սան Ֆրանցիսկոյում: Փառատոնից հետո կշարունակվի Երնջակյանի «Անտեր-գրաունդ» եւ Էդվարդ Ռադինսկու «Ներոն» ներկայացումների վերականգնումը: Իսկ մինչ փառատոն, սեպտեմբերի վերջին «Մոսկվա» կինոթատրոնում կկայանա Արա Երնջակյանի սցենարով ու ռեժիսորական դեբյուտով նկարված «Հոբելյանական հաճախորդ» գեղարվեստական 1.30 ժամ տեւողությամբ ֆիլմի ցուցադրությունը: Ինչպես տեղեկացրեց պրն. Երնջակյանը, ֆիլմը երիտասարդ զույգի սիրո գեղեցիկ պատմությունն է. հանդիպումը, զգացմունքների զարգացումը եւ... մնացյալը ֆիլմում: Ֆիլմում կնոջ դերակատար է ընտրվել Լուիզա Ներսիսյանը, իսկ տղամարդու դերը վստահվել է վրաց շնորհաշատ դերասան Դավիթ Կացառավային:

Մաղթենք Կամերային թատրոնին հաջողություններ միջազգային փառատոնում եւ սպասենք նորանոր ներկայացումների:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱ

Ոգեկոչում են հայազգի երգչի հիշատակը

«Արմինյն միրոր սփեֆթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ օգոստոսի 8-ին Անկարայում Միսհաս Փաշա պողոտայի վրա գտնվող «Անկարա Յափը» Արվեստի կենտրոնում կայացել է հայազգի երգիչ Արամ Տիգրանի մահվան երկրորդ տարելիցի ոգեկոչումը: «Արամը Մեծավոր Արեւելքի ժողովուրդների ձայնն է», նշել է այդ միջոցառման կազմակերպիչներից մեկը՝ Սահիս **Չեթինօղլուն**: «Միրոր սփեֆթեյթրը» լուրը արտատպել է «Հուրրիեթ դեյլի նյուզ» թերթից, որտեղ **Վերջիհան Զիլֆիօղլուն** հավելել է, որ երկրորդ միջոցառումը երգչի հիշատակին կայանալու է հոկտեմբերի 15-ին Դիարբեքիրում:

Արամ Տիգրանը հանրությանը բաշածանոթ է առավելաբար իր բդեռեն երգերով: «Նա ազատության համար պայքարող ժողովուրդների երգիչն է, ճնշված մարդկանց շունչը: Եթե մենք չենք կարող նրա մարմինը ֆիզիկապես ետ բերել, ապա կարող ենք նրա ձայնն ու շունչը մի անգամ եւս ըմբոշխնել», ասել է Չեթինօղլուն:

Հայազգի երգիչը վախճանվել էր Հունաստանում օգոստոսի 8-ին երկու տարի առաջ եւ իր կյանքում ցանկություն էր հայտնել թաղվել Դիարբեքիրում: Թուրքական կառավարությունը մերժել էր ցանկությունն՝ ասելով, որ նա Թուրքիայի քաղաքացի չէր:

«Նախարարության որոշումով մարդիկ, որոնք Թուրքիայի քաղաքացի չեն, կարող են թաղվել այս հողում: Պետք է հարգեին Տիգրանի ցանկությունը, բայց նրանք մերժեցին, որովհետեւ նա հայ էր», հայտարարել է Չեթինօղլուն՝ ակնկալելով աջակցություն բոլոր նրանց կողմից, ովքեր հավատում են ժողովուրդների բարեկամությանը:

Կառավարության մերժումից հետո Տիգրանի ընտանիքը դիմել էր արտգործնախարարություն եւ մշակույթի նախարարություն, բայց դրական պատասխան չստանալով, երգիչ Արամ Տիգրանի մարմինը ի վերջո հողին էր հանձնվել Բրյուսելում:

«Տիգրանի հորինած երգերը բազմաբնույթ էին: Նա նաեւ երգում էր տարբեր լեզուներով եւ բոլորովին զարմանալի չէ, որ հայ լինելով նա մեծապես նվիրված էր քրդական երաժշտությանը: Մենք կոգեկոչենք նրա հիշատակը Դիարբեքիրում հոկտեմբերի 15-ին», եզրակացրել է Չեթինօղլուն:

Հ. Ծ.

Շիրակի ամառային գույները

Ցուցահանդեսի բացման տեսարանից

Երեկ ՀՀ նկարիչների միությունում «Հայկական ներկաղնակ» փառատոնի շրջանակներում տեղի ունեցավ «Շիրակի ամառային գույները» ցուցահանդեսի բացումը՝ նվիրված Հայաստանի անկախության 20 ամյակին: Կազմակերպիչներն էին ՀՀ նկարիչների միությունը, Գյումրու քաղաքապետարանը, «Լոռվա ձոր» հայրենակցական միությունը, «Փյունիկ» հիմնադրամը:

Ցուցահանդեսին ներկայացված էին թվով երեսուն նկարիչների՝ Լեմս Ներսիսյանի, Հրանտ Թադեւոսյանի, Սոս Հարությունյանի, Արմեն Աթայանի, Վահագն Գալայանի, Լորիկ Մինասյանի, Հայկ Միքայելյանի եւ այլոց աշխատանքները:

Ցուցահանդեսին ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, ՀՀ Գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը, «Փյունիկ» հիմնադրամի նախագահ Լեւոն Սարգսյանը, «Լոռվա ձոր» հայրենակցական միության նախագահ Սերգո Երիցյանը, Գյումրու քաղաքապետարանի մշակույթի վարչության պետ Արսաշես Կարապետյանը եւ այլք, որոնք իրենց ողջույնի խոսքով բացեցին ցուցահանդեսը:

«Հայկական ներկաղնակ» փառատոնը դառնում է յուրօրինակ կամուրջ մասնակիցների եւ տեղի արվեստագետների միջեւ: Վերջիններս, դրանով իսկ հնարավորություն են ստանում իրենց աշխատանքները ցուցադրել Երեւանում: Նման փառատոները թույլ են տալիս նկարիչներին ընդլայնելու իրենց ստեղծագործությունների աշխարհագրությունը:

Գեղանկարիչները պատկերել են արհեստների եւ արվեստների քաղաք հին Գյումրին՝ իր գողտրիկ ու նեղլիկ փողոցներով, անցած դարերի հին բնակելի տներով, դրանց կողքին վեր խոյացած ժամանակակից շինություններով՝ փորձելով արտացոլել քաղաքի հմայքը: Յուրահատուկ արվեստագետի աշխատանքում զգացվում է ջերմություն ու սեր հայրենի բնաշխարհի ու պատմական եւ ճարտարապետական կոթողների նկատմամբ:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎՍԱԿԻՄՅԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներսես վրդ. Մելիք-Թանգյան. «Հայոց եկեղեցական իրավունքը»

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությամբ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը վերահրատարակել է Ներսես վարդապետ Մելիք-Թանգյանի «Հայոց եկեղեցական իրավունքը» գիրքը:

Արժեքավոր այս աշխատությունը երկու գրքից բաղկացած մենագրություն-դասագիրք է, որը Մելիք-Թանգյանը գրել է Պետերբուրգում համալսարանական իր կրթությունն ավարտելուց հետո: Այս աշխատանքը նվիրված է հայոց կանոնական իրավունքի հարցերի քննարկմանը, եւ եկեղեցական իրավունքի մի համապարփակ ձեռնարկ է հայ իրականության մեջ: Այս գործը երկար տարիներ եղել է հայ հոգեւորականության սեղանի գիրքը եւ ծառայել է որպես դասագիրք Հայոց եկեղեցու հոգեւոր ճեմարաններում: Այսօր էլ Ն. Մելիք-Թանգյանի աշխատությունը մնում է դեռեւս միակ հրատարակված գիրքը հայկական կանոնագիտական գրականության մեջ, որը նախատեսված է Հայոց եկեղեցու բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման համար:

Գիրքը առաջաբանով եւ ծանոթագրություններով հրատարակության է պատրաստել պատմական գիտությունների դոկտոր Ազատ Բոզոյանը: Տպագրությունն իրականացվել է Հյուսիսային Ամերիկայի Արեւելյան թեմի «Զգոն Եպս. Տեր-Հակոբյան» հիմնադրամի մեկենասությամբ:

Վերակազմվել է Ս. Կարապետ եկեղեցու որմնանկարը

ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հրավերով այս օրերին Հայաստանում էր գտնվում որմնանկարներ վերականգնող մասնագետ Քրիստինե Լամորեան (Բելգիա): Նա օգոստոս ամսին մոտ մեկ շաբաթ աշխատանքներ է իրականացրել Որոտանավանքի Ս. Կարապետ եկեղեցում: Մաքրվել, ամրացվել, վերականգնվել է եկեղեցու հյուսիսային խորանի որմնանկարը:

Ենթադրվում է, որ այն XI դարի աշխատանք է՝ ամփոփված 12 սմ տրամագիծ ունեցող շրջագծի մեջ, ուր պատկերված է աստղազարդ երկնագույն երկինք՝ շրջապատված կենդանակերպ ու մարդակերպ պատկերներով, կենտրոնում թեւավոր հրաշտակ: Որմնանկարի հետագա անխթար պահպանությանն ուղղված աշխատանքներին մասնակցել են նաեւ վերականգնող ճարտարապետ Արա Զարյանը (Իտալիա) եւ որմնանկարների վերականգնող մասնագետ Արժանիկ Հովհաննիսյանը (Հայաստան):

Մ. Մ.

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ

«Կոմիտասի տասը պատվիրանները» Լոս Անջելեսում

Կալիֆորնիայի միջազգային թատերական փառատոնի շրջանակներում Ամերիկայում առաջին անգամ սեպտեմբերի 8-ից 11-ը Լոս Անջելեսի «Թեատր Սենտրում» (Թատերական կենտրոնում) ներկայացվելու են «Կոմիտասի 10-ը պատվիրանները» եւ «Գույներ» պիեսները Հայաստանից ՄԻՀՐ թատերական խմբի կողմից՝ համագործակցությամբ Լոս Անջելեսում գործող «Հայկական դրամատիկական արվեստների միություն» (ՀԴԱՄ):

«Արմինյն միրոր սփեֆթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ բեմադրությունները նվիրված են լինելու Կոմիտաս վարդապետի ծննդյան 140 ամյակին: Փորձելով փշրել արվեստների ժանրերի, փիլիսոփայությունների եւ տարբեր մշակույթների միջեւ եղած խոչընդոտները, ՄԻՀՐ խումբը բեմադրություններում պատմական ու ավանդական մոտեցումներին միահյուսում է էթնոգրաֆիական պարերի արդի շարժումները: Խմբի ներկայացումները դիտել են Ռուսաստանում (Մոսկվա, Արխանգելսկ, Տյումեն), Եգիպտոսում, Իրանում, Չեխիայում, Լատվիայում եւ Վրաստանում: «Գույներ» պիեսում նկարչական գույների եւ պարային շարժումների միջոցով փորձ է արվում բացահայտել մարմնի եւ տարածության միջեւ գոյություն ունեցող կապը: «Գույները կենդանի «էակներ» են: Ունեն հոգի, մարմին եւ խոսում են իրենց ուրույն լեզվով», բացատրում են նրանք:

Միջազգային թատերական փառատոնը տեւելու է մինչեւ սեպտեմբերի 18-ը: Մասնակցում են աշխարհի տարբեր երկրների թատերախմբերը: Փառատոնի ընդհանուր տնօրենն է Ջո Պերակիոն, իսկ գործադիր պրոդյուսերը՝ Թամի Թեյլորը:

Կիրակի օրը, սեպտեմբերի 11-ի ներկայացումից առաջ ՀԴԱՄ-ի խումբը բեմական ընթերցանությամբ հանդիսատեսի դատին է հանձնելու Բիանկա Պահատուրյանի «Քաղաքավարության վնասները շարունակվում են» (հիմնված Հակոբ Պարոնյանի պատմվածքների վրա) պիեսը:

Հ. Ծ.

Մարինե Զուլոյանի ցուցահանդեսը



«Մարինեի գործերը զուարթ գույներով ներկայացուած 19-րդ դարու ազնուական հայուհիներու առօրեան է, իրենց փարթամ եւ ինքնատիպ տարազներով ու նորաձեւ շղարշներով: ... Գնահատելի է իր ճաշակն ու լաւատեսութիւն ներշնչող վառ գոյներու համադրումը», կարդում ենք Կանադայում լույս տեսնող «Արագայ» ազգային, մշակութային եւ հասարակական շաբաթաթերթի օգոստոսի 15-ի համարի հոդվածում (արտատպված «Մասիս» թերթից), որը գրվել է Լոս Անջելեսի սբ. Ղեւոնդ մայր տաճարի Զորայան թանգարանում հունիսի 30-ին բացված Մարինե Զուլոյանի նկարչական ցուցահանդեսի առթիվ:

Դոկտ. Վահրամ եւ տիկին Պոլինա Պիրիֆիգի հովանավորությամբ կազմակերպված ցուցահանդեսին ներկա են եղել արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը եւ արվեստասեր հասարակության ներկայացուցիչներ:

Իր ուրույն երանգաղնակի մի փունջ ստեղծագործություններով հանրությանը ներկայացած նկարչուհին կողակիցն է Վազգեն քահանա Պոյաճյանի:

Հ. Ծ.

Կրկին խոշոր հաշվով

Երեկ Եվրո-2012-ի ընտրական մրցաշարի հերթական խաղում Հայաստանի ազգային հավաքականը հյուրընկալվել էր 2-րդ խմբի բացահայտ հեշտաթահ Անդորրայի ընտրանուն: Թեեւ կադրային որոշ խնդիրներին, այդ խաղում մեր հավաքականից հաղթանակ էր ակնկալվում: Եվ մեր ֆուտբոլիստներին հաջողվեց կարեւոր 3 միավոր վաստակել՝ կրկին հաղթելով խոշոր հաշվով:

Հայ ֆուտբոլիստները բավական ակտիվ սկսեցին հանդիպումը ու փորձում էին հնարավորինս արագ հասնել հաջողության: Սակայն դաշտի տերերը ոչ միայն հմտորեն էին պաշտպանվում, այլեւ փորձում էին վտանգավոր հակագրոհներ կազմակերպել: Նման պայմաններում առաջին խաղակեսում հայ ֆուտբոլիստներին չհաջողվեց լրջորեն սպառնալ մրցակցի դարպասին, թեեւ խաղային ու տարածքային զգալի առավելություն ունեին: Առաջին վտանգավոր պահը ստեղծվեց միայն 23-րդ րոպեին, սակայն Գեւորգ Ղազարյանի հարվածը մի փոքր շեղ էր: Հետո հետեւեց Արթուր Սարկիսովի դիպուկ հարվածը, սակայն այս անգամ հաջող խաղաց դարպասապահը: Վերջապես 35-րդ րոպեին Հայաստանի հավաքականի գրոհը գոլային ավարտ ունեցավ: Աչքի ընկավ բրազիլացի Մարկոսը, որը հեռահար հարվածով հիանալի գոլի հեղինակ դարձավ:

Երկրորդ խաղակեսում մեր ֆուտբոլիստների գրոհներն ավելի նպատակասլաց ու վտանգավոր էին: Մերոնք գոլային մի քանի լավ պահեր ունեցան, որոնցից երկուսն ավարտվեց դարպասի գրավումով: 75-րդ րոպեին աչքի ընկավ Գեւորգ Ղազարյանը, իսկ խաղավերջում Հենրիխ Մխիթարյանն իրացնելով 11մ հարվածը, հաշիվը դարձրեց 3-0: ՀՀ հավաքականն ընթացիկ մրցաշրջանում առաջին հաղթանակը տոնեց, ինչն անչափ կարեւոր էր սեպտեմբերի 6-ին սլովակների հետ կայանալիք վճռորոշ խաղից առաջ:

Հայ մարզիկներն ու մասնագետները հմտանում են լողափնյա հանդբոլում

Լողափնյա հանդբոլն աշխարհում գնալով ավելի մեծ մասսայականություն է վայելում: Այն Հայաստանում զարգացնելու հարցում ներկայումս մարզաձեւի հանրապետական ֆեդերացիան հետեւողական աշխատանք է կատարում: Վերջերս Ուռեկի քաղաքում Հայաստանի հանդբոլիստուհիների երիտասարդական հավաքականն ուսումնամարզական հավաք անցկացրեց, որից հետո մասնակցեց միջազգային մրցաշարի: Փաստորեն, Սեւ ծովի ափին մեր մարզուհիները նորամուծ նշեցին իրենց համար դեռեւս էկզոտիկ համարվող լողափնյա հանդբոլում: Մեր հավաքականում ընդգրկված էին 16-17 տարեկան հանդբոլիստուհիներ: Այս թիմի հետ մարզաձեւի ֆեդերացիան մեծ հույսեր է կապում: Հաջորդ տարի մեր հավաքականը մասնակցելու է դասական հանդբոլի «Չելենջ տրոֆի» միջազգային մրցաշարին: Իսկ այս տարվա սեպտեմբերի 16-19-ը հայ հանդբոլիստուհիներին լուրջ փորձություն է սպասվում Բաթումում, որտեղ կայանալու է մինչեւ 18 տարեկանների լողափնյա հանդբոլի միջազգային եւս մեկ մրցաշար:

Հայաստանի հավաքականն առաջին խաղում համառ պայքարում, ընդամենը մեկ միավորի տարբերությամբ զիջեց Փոթիի հանդբոլիստուհիներին: Նշենք, որ լողափնյա հանդբոլում կանոններն էապես տարբերվում են դասականից: Օրինակ, առաջին խաղակեսի հաղթողը լրացուցիչ մեկ միավոր է ստանում: Երկրորդ խաղակեսինը՝ նույնպես: Իսկ եթե հաշիվը հավասար է, ապա թիմերից յուրաքանչյուրը 4-ական տուգանային նետում է կատարում:

Թբիլիսիի հավաքականին Հայաստանի ընտրանին առաջին կեսում հաղթեց 8 գնդակի տարբերությամբ, իսկ 2-րդում զիջեց 1 գնդակի տարբերությամբ: Հաղթողին որոշելու համար նշանակվեցին 4-ական նետումներ: Մերոնք դիպուկ իրացրին նետումները եւ հաղթեցին:

1-ին տեղի համար պայքարում Հայաստանի հավաքականը պետք է կրկին մրցեր Թբիլիսիի ընտրանու հետ, որի կազմում ավելի բարձր տարիքի մարզուհիներ էին ընդգրկված: Սակայն կազմակերպիչների խնդրանքով Հայաստանի հավաքականին դիմագրավեց Փոթիի եւ Թբիլիսիի թիմերի լավագույն խաղացողներից կազմավորված հավաքականը: Այդ հանդիպումը մերոնք տանուլ տվեցին ու գրավեցին 2-րդ տեղը: Անկախ արդյունքներից, ուսումնամարզական հավաքն ու անցկացրած հանդիպումները մեծ օգուտ տվեցին լողափնյա հանդբոլում առաջին քայլերը կատարող մեր հանդբոլիստուհիներին:

Հայաստանում մարզումները շարունակելու նպատակով ներկայումս Սեւանի ափին՝ Մարտունիում մարզաբազայի շինարարության աշխատանքներ են տարվում:

Հանդբոլի հանրապետական ֆեդերացիան նաեւ մտածում է լողափնյա հանդբոլի մասնագետների պատրաստման մասին: Այդ նպատակով Հայաստանի հինգ մասնագետներ՝ երեւանցիներ Արմինե Անտոնյանը, Սյուզաննա Սարգսյանը, Գեւորգ Բաղդասարյանը, Լոռիից Արման Բարսեղյանը եւ Գեղարքունիքի մարզից Վարդան Դավթյանը ներկայումս մասնակցում են Բաթումում Եվրոպայի հանդբոլի ֆեդերացիայի կազմակերպած սեմինարին: Այն վարում է Լեհաստանից գործուղված մասնագետը: Նշենք, որ սեմինարը մասնագիտական տարբեր ուղղություններով է: Վարդան Դավթյանը կիմտանա մարզչական աշխատանքում, մրցավարությունում իրենց գիտելիքները կհարստացնեն Արմինե Անտոնյանը, Սյուզաննա Սարգսյանը եւ Գեւորգ Բաղդասարյանը: Իսկ Արման Բարսեղյանը մասնակցում է տեսուչների վերապատրաստման դասընթացներին: Սեմինարը կավարտվի սեպտեմբերի 4-ին: Քննությունները հաջող հանձնողներին կտրվեն հավաստագրեր: Դրանք հնարավորություն կտան ավելի բարձրացնելու որակավորումը՝ մասնակցելով հաջորդ տարվա մայիսին Ավստրիայում կայանալիք սեմինարին:

Մարզաձեւի եվրոպական ֆեդերացիան շահագրգռված է, որպեսզի մեր տարածաշրջանի շատ մասնագետներ վերապատրաստվեն: Նրանցից լավագույններին հնարավորություն կընձեռվի սպասարկելու 2012-ի սեպտեմբերին Բաթումում կայանալիք մինչեւ 18 տարեկանների Եվրոպայի առաջնության հանդիպումները:

Մեկնարկեց Բոտվիննիկի հուշամրցաշարը

Երեկ Մոսկվայում մեկնարկեց Միխայիլ Բոտվիննիկի ծննդյան 100-ամյակին նվիրված արագ շախմատի մրցաշարը: Տղամարդկանց եւ կանանց մրցաշարերի մասնակիցներն անցկացրին առաջին շրջանի 3 տուրերի մրցախաղերը: Տղամարդկանց մրցաշարում Լեւոն Արոնյանը մեկնարկային տուրում հաշտություն կնքեց Մագնուս Կառլսենի հետ: Ոչ-ոքի ավարտվեց նաեւ Վիշվանաթան Անանդի եւ Վլադիմիր Կրամնիկի մրցավեճը:

2-րդ տուրում Արոնյանը սպիտակներով 48-րդ քայլում պարտվեց աշխարհի չեմպիոն Վիշվանաթան Անանդին: Իսկ Կառլսենն ու Կրամնիկը հաշտություն կնքեցին: 3-րդ տուրում Արոնյանը սեւերով հաշտություն կնքեց Կրամնիկի հետ: Նույնպիսի արդյունք գրանցվեց նաեւ Անանդ-Կառլսեն մրցավեճում: 3 տուրից հետո առաջատարը 2 միավորով Անանդն է: 1,5-ական միավոր ունեն Կառլսենն ու Կրամնիկը: Աղյուսակը մեկ միավորով եզրափակում է Արոնյանը:

Կանանց մրցաշարում Էլինա Դանիելյանը հաղթանակով մեկնարկեց: Եվրոպայի այս տարվա չեմպիոնուհի Վիկտորիա Չմիլիտեի հետ պարտիայի նավակային վերջնախաղում հայ շախմատիստուհին 2 զինվորի առավելություն ուներ, ինչն էլ վճռորոշ եղավ: Մյուս մրցախաղում Համպի Կոներուն սեւերով պարտության մատնեց Տատյանա Կոսինցեւային: Վերջինիս հետ 2-րդ տուրի պարտիայում Դանիելյանը սեւերով 41-րդ քայլին պարտվեց: Անհաջողության մատնվեց նաեւ Կոներուն, որը սպիտակներով զիջեց Չմիլիտեին: 3-րդ տուրում Դանիելյան-Կոներու պարտիան ավարտվեց ոչ-ոքի, իսկ Չմիլիտեն 2-րդ հաղթանակը տոնեց Կոսինցեւայի հետ մրցախաղում ու 2 միավորով դարձավ առաջատար: Դանիելյանի և Կոներուի օգտին 1,5-ական միավոր է գրանցված, Կոսինցեւան ունի 1 միավոր: Այսօր կկայանան 2-րդ շրջանի հանդիպումները:

Արման Փաշիկյանը կրկին հաղթեց

Յուգրայի նահանգապետի շախմատի գավաթի խաղարկության 2-րդ տուրն էլ հաջող էր Արման Փաշիկյանի համար: Նա սեւերով պարտության մատնեց ռուսաստանցի Իլնուր Գիմադուտդինովին: Ռուսաստանցի Օլեգ Պապայանը, որ առաջին տուրում հաղթել էր, սպիտակներով զիջեց Սերգեյ Ժիգալկոյին:

2 տուրից հետո Փաշիկյանը 2 միավորով 34 շախմատիստների հետ գլխավորում է աղյուսակը: 3-րդ տուրում նրա մրցակիցը կլինի 2 միավոր ունեցող Վիտալի Շինկեւիչը:

ԼՈՆԴՈՆ-2012-ԻՆ ԸՆԴԱՌԱՋ

ՄՕԿ-ը հաստատել է Նորայր Բախտամյանի մասնակցությունն օլիմպիադային

Ինչպես տեղեկացրել ենք, հունիսին Մյունխենում անցկացված հրաձգության աշխարհի գավաթի խաղարկությունում Նորայր Բախտամյանը տեղ էր զբաղեցրել լավագույն յոթնյակում ու Հայաստանի մարզիկներից առաջինն էր 2012-ի Լոնդոնի ամառային օլիմպիադայի ուղեգիր նվաճել: Եվ ահա օրերս ՄՕԿ-ը պաշտոնապես հաստատել է հայ հրաձիգի մասնակցությունը օլիմպիական խաղերին՝ համապատասխան գրություն ուղարկելով Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե: Այս մասին տեղեկացանք ՀԱՕԿ-ի մամուլի ծառայությունից:

Լոնդոնյան օլիմպիադան մեր փորձառու հրաձիգի համար կլինի 3-րդը: Ընդհանրապես աշխարհում այնքան էլ մեծ չէ այն մարզիկների քանակը, որոնք մասնակցել են 3 եւ ավելի օլիմպիադաների: Դա հաջողվում է մարզական ռեժիմին խստորեն հետեւելու, հրնաջան մարզումների, նպատակային աշխատանքի շնորհիվ:

Օլիմպիական խաղերում Նորայր Բախտամյանի նորամուծը կայացել է 2004-ին, Աթենում: Նորայրը շատ լավ հանդես եկավ ու մոտ էր օլիմպիական մեդալին, սակայն ի վերջո բավարարվեց 4-րդ տեղով, ինչը օլիմպիադային մասնակցած հայ մարզիկների մեջ լավագույն արդյունքն էր: 2008-ին Պեկինի օլիմպիադայում Նորայրը գրավեց 11-րդ տեղը: Դա, իհարկե, չէր կարող բավարարել անվանի հրաձգին: Նա չընկճվեց ու շարունակեց հրնաջան մարզումները: Օգտագործելով իր հարուստ մրցափորձը, դրսեւորելով անկոտրում կամք ու վճռականություն, նաեւ աչքի ընկնելով դիպուկ կրակոցներով, Նորայր Բախտամյանը հաջողությամբ պայքարեց օլիմպիական ուղեգրի համար ու հայ մարզիկներից առաջինը Լոնդոն մեկնելու իրավունք ստացավ: Մնում է, որ օլիմպիադայում էլ փորձառու հրաձիգն աչքի ընկնի դիպուկությամբ ու վերջապես արժանանա մեդալի: Նա Լոնդոնում կմասնակցի օդամղիչ ատրճանակով 10 եւ 50 մետր տարածություններից մրցումներին:

Մինչեւ օլիմպիադայի մեկնարկը Նորայր Բախտամյանն իր պատրաստականությունը կստուգի միջազգային մրցումներում: Դրանցից առաջինը կլինի հաջորդ տարվա փետրվարին Ֆինլանդիայում կայանալիք Եվրոպայի առաջնությունը:

Նազարյանն ու Դավթյանը հավակնում են օլիմպիական ուղեգրերի

Ընթացիկ մրցաշրջանը նախաօլիմպիական է եւ մի շարք մարզաձեւերում խաղարկվում են 2012-ի Լոնդոնի օլիմպիադայի ուղեգրերը: Ի տարբերություն այլ մարզաձեւերի, ձյուդոյում օլիմպիական վարկանիշ կարելի է ձեռք բերել ոչ միայն աշխարհի եւ Եվրոպայի առաջնություններում, այլեւ վարկանիշային մի շարք մրցումներում: Դրանք են աշխարհի գավաթի խաղարկությունը, որն անցկացվում է 10 փուլով, «Մեծ սաղավարտ» մրցանակի շարքին դասվող չորս, «Մասթերս» շարքի եւ Գրան պրիի մրցաշարերը:

Ջյուդոյի միջազգային ֆեդերացիան կազմել է վարկանիշային միավորների ցանկը տարբեր մրցաշարերի համար: Օրինակ աշխարհի առաջնությունում հաղթող ձյուդոյիստը ստանում է վարկանիշային 500 միավոր, Եվրոպայի չեմպիոնը՝ 180: «Մասթերս» դասում հաղթելու դեպքում մարզիկն իր օգտին 400 միավոր է գրանցում:

Ընթացիկ մրցաշրջանում հայ ձյուդոյիստներից հաստատես հաջող ելույթներ են ունեցել գյումրեցի Հովհաննես Դավթյանը (60 կգ) եւ 2005-ի Եվրոպայի չեմպիոն, հրազդանցի Արմեն Նազարյանը (66 կգ): Ջյուդոյի միջազգային ֆեդերացիայի հրապարակած վարկանիշային ցուցակում Հովհաննես Դավթյանը քաշային իր կարգում զբաղեցնում է 10-րդ հորիզոնականը, իսկ Արմեն Նազարյանը 17-րդն է: Ցավոք նրանք անհաջող հանդես եկան վերջերս Փարիզում անցկացված ձյուդոյի աշխարհի առաջնությունում: Նազարյանը պայքարը թողեց առաջին իսկ փուլում, իսկ Դավթյանը իրավունք ստանալով պայքարելու բրոնզե մեդալի համար, չկարողացավ այն նվաճել: Այլապես վարկանիշային ցուցակում հայ ձյուդոյիստները զգալիորեն կբարելավեին իրենց ցուցանիշները:

Բայց այսօր էլ Արմեն Նազարյանն ու Հովհաննես Դավթյանն օլիմպիական ուղեգրերի հավակնորդներ են: Նրանք մինչեւ տարեվերջ մասնակցելու են Աբու Դաբիում կայանալիք Գրան պրիի եւ Տոկիոյում անցկացվելիք «Մեծ սաղավարտ» մրցաշարերին ու իրական հնարավորություն ունեն վարկանիշային միավորներ վաստակելու:

Հայ բռնցքամարտիկները ծանր են մրցակիցներից

Երեկ «Անի Պլազա» հյուրանոցում տեղի ունեցավ Երեւանում կայանալիք պրոֆեսիոնալ բռնցքամարտի երեկոյի մասնակիցների կշռման պաշտոնական արարողությունը: Գլխավոր մենամարտի մասնակիցներ Վախթանգ Դարչինյանն ու Էվանս Մբամբան համապատասխանել են մինչեւ 53,5 կգ քաշային կարգին: Վախթանգը կշռել է ուղիղ 53,5 կգ, իսկ Մբամբայի քաշը եղել է 52,9 կգ:

Երեկոյի մասնակից մյուս հայ բռնցքամարտիկներն էլ ավելի ծանր են եղել իրենց մրցակիցներից: Ինչպես հայտնի է, առաջինը մրցապարեզ դուրս կգան Ազատ Հովհաննիսյանն ու լատվիացի Սերգեյ Տասիմովը: Ազատի քաշը 55,3 կգ էր, մրցակիցը նրանից թեթեւ էր ընդամենը 50 գրամով: Նրանք 4-ռաունդանոց մենամարտ կանցկացնեն:

Այնուհետեւ ռինգ դուրս կգան Գաբրիել Տոլմաջյանն ու էստոնացի Եվգենի Ֆյոդորովը, որոնք 8-ռաունդանոց մենամարտ կանցկացնեն: Տոլմաջյանի քաշը 60,8 կգ էր, մրցակցինը՝ 60,1 կգ: Հովհաննես Ժամկոչյանն էլ 200 գրամով (60,9 կգ) ծանր էր վրացի Միխայիլ Գոգոլաշվիլուց:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Ասողագետ Վահե Օսկանյանի 90-ամյակը

Սեպտեմբերի 2-ին լրացավ հայ ասողագիտության երախտավորներից մեկի՝ Վահե Օսկանյանի 90-ամյակը: Նա միաժամանակ հայտնի է թե՛ որպես Հարավսլավիայի ամենանշանավոր ասողագետներից եւ թե՛ որպես Բյուրականի աստղադիտարանի կարեւորագույն ուղղություններից մեկի՝ փոփոխական աստղերի ուսումնասիրության առաջատարներից մեկը: Ծնվել է 1921թ. սեպտեմբերի 2-ին Բելգրադում: Նրա հայրը Սողոմոն Թեհլերյանի հորեղբոր որդին էր: Բելգրադում ավարտել է միջնակարգ դպրոցը եւ գիմնազիան: 1940թ. ընդունվել է Բելգրադի համալսարանի էլեկտրատեխնիկական ֆակուլտետը, այնուհետեւ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1946թ., փոխելով ֆակուլտետը, ուսումը շարունակել է նույն համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի աստղագիտության բաժնում, որն ավարտել է 1949թ.: 1948-ից աշխատել է Բելգրադի աստղադիտարանի կրկնակի եւ փոփոխական աստղերի բաժնում: 1952-ից ղեկավարել է փոփոխական աստղերի ուսումնասիրության խումբը: Օգտագործելով իր իսկ պատրաստած էլեկտրալուսաչափ-բեւեռաչափը, 1952-1953թթ. գրանցել է UV Կետի աստղի վրա երբեւ դիտված ամենամեծ բռնկումները: 1956-1957թթ. համագործակցության ծրագրով աշխատել եւ կատարելագործվել է Բյուրականի աստղադիտարանում: 1960թ. հիմնադրել է Բելգրադի աստղադիտարանի աստղաֆիզիկայի բաժինը, որը ղեկավարել է մինչեւ 1966թ.: 1961թ. պատրաստել է UV Ceti տիպի փոփոխական աստղերի ուսումնասիրությանը նվիրված դոկտորական թեզ: 1964-ից դասախոսել է Բելգրադի համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետի աստղագիտության բաժնում: 1964 եւ 1965 թթ. ընտրվել է Բելգրադի աստղադիտարանի տնօրեն, զուգահեռաբար հանդիսանալով Բեգրադի աստղադիտարանի բյուլետենի եւ Բելգրադի աստղադիտարանի հրատարակումների գլխավոր խմբագիրը: 1966թ. ընտանիքով տեղափոխվել է Հայաստան եւ աշխատանքը շարունակել Բյուրականի աստղադիտարանի էլեկտրալուսաչափության լաբորատորիայում, որը ղեկավարել է 1970-1986թթ.: 1970-1980թթ. դասավանդել է ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետի աստղաֆիզիկայի ամբիոնում: 1986թ. տեղափոխվել է Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական ինստիտուտ, ուր զբաղեցրել է աստղաֆիզիկայի բաժնի վարիչի պաշտոնը: Օսկանյանին է պատկանում աստղերի բռնկումների դասակարգումն ըստ բռնկման պայծառության եւ տեւողության: Ցույց է տվել, որ նման բռնկումներ տեղի են ունենում նաեւ այլ՝ ոչ կարմիր թզուկ աստղերի վրա, եւ որ այդ բոլոր աստղերի, ինչպես նաեւ Արեգակի բռնկումներն ունեն նույն բնույթը: Հրատարակել է 87 գիտական աշխատանք, նաեւ տասնյակ գիտահանրամատչելի հոդվածներ: Եղել է Միջազգային աստղագիտական միության անդամ: Վախճանվել է 1989թ. Երեւանում:

Մամուլը եւ խոսքի ազատությունը «Ortr»-ում

Լույս է տեսել «Ortr» եվրոպական ամսագրի հատուկ թողարկումը (5-6/2011)՝ նվիրված անկախության 20 տարիներին Հայաստանում եւ Սփյուռքում հայ մամուլի զարգացմանն ու խոսքի ազատությանը:

Ի՞նչ զարգացումներ է ապրել հայ մամուլը, որո՞նք են հիմնական խնդիրները, ի՞նչ ապագա է սպասում եւ զարգացման ի՞նչ հեռանկարներ կան: Այս հարցերին պատասխանում են Հայաստանի բոլոր հեղինակավոր լրագրողական կազմակերպությունների ղեկավարները, լրատվամիջոցների հայտնի խմբագիրներն ու ղեկավարները: 30-ից ավելի կարծիքներ ու հարցազրույցներ են տպագրվել, որոնք ընդգրկում են ողջ լրատվական դաշտի բոլոր ոլորտները՝ թերթեր, ամսագրեր, ռադիո, հեռուստատեսություն, էլեկտրոնային թերթեր կամ լրատվական կայքէջեր, լրատվական գործակալություններ: Շապիկին տպագրվել է վաղամեռիկ լուսանկարիչ Ռուբեն Մանգասարյանի լուսանկարը, իսկ հաջորդող էջերում՝ նրա մասին պատմող հոդված եւ լուսանկարչական ռեպորտաժ:



«Արբանյակային հայկական ամեն մի հեռուստատեսություն միջազգային որեւէ լեզվով հայկական լրատվական, պատմամշակութային, ճանաչողական մեկ հաղորդում պետք է պատրաստի, ինչը մեծապես կնպաստի հայկական աշխարհի մասին լրատվության տարածմանը, ճանաչողությանը եւ, իհարկե, տուհանջներին բավարար որակով հաղորդումներ հեռարձակելու հնարավորությունը: Արբանյակային հեռարձակմամբ 120 ժամ ամբողջ աշխարհով տարածում են հայաստանյան լրատվություն՝ մնալով միմիայն իբրեւ հայկական սփյուռքի հայախոս հասվածի սպառման աղբյուր, չօգտագործելով միջազգային լսարանի վրա ազդելու նույնիսկ մեկ րոպեի հնարավորությունը: Մինչդեռ հայկական հեռուստատեսության պոտենցիալ լսարանի մեջ են մտնում նաեւ խառնամուսնություններով ընտանիքները, որոնց թիվը մեծանում է:

«Ortr»-ի զրուցակիցների գերիշխող մեծամասնության կարծիքով թե՛ Հայաստանում եւ թե՛ Սփյուռքում ավանդական լրատվամիջոցներին այսօր փոխարինելու են գալիս համացանցային կայքէջերն ու սոցիալական ցանցերը: Ազատության առումով ինտերնետային կայքերից զատ Հայաստանում մամուլը համարվում է համեմատաբար ազատ, իսկ հեռուստատեսությունը՝ անազատ, այլ խնդիր է դրանց որակը: Ամենամեծ պահանջները ներկայացվում են հեռուստատեսային կայաններին, որոնք ունեն ամենամեծ լսարանը, սակայն նաեւ ամենավատ ձեւով են օգտագործում այդ լսարանի պարիզմի զարգացմանը», գրում է իր խմբագրականում ամսագրի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանը:

«Ortr»-ի հատուկ թողարկումն անդրադառնում է նաեւ լրատվամիջոցներում մայրենի լեզվի պահպանման խնդրին, սփյուռքահայ հայատառ մամուլում ստեղծված աղետալի վիճակին, մամուլի նկատմամբ Հայաստանում եւ Սփյուռքում ձեւավորված ավանդույթներին:

«Ortr»-ի հատուկ համարում տեղ են գտել սփյուռքահայ խմբագիրներ Հրաչ Քալուսահակյանի, Արմեն Հարեյանի, Ժիրայր Չոլաքյանի, Արա Թորանյանի, Շահան Գանտահարյանի, Դերենիկ Մելիքյանի, Մովսես Քեշիշյանի, Տիգրան Թավադյանի, Կարեն Աղեկյանի, Քրիստափոր Մխիթարյանի, Ռաֆֆի Քանդյանի, պոլսահայ երեք խմբագիրների՝ Ռոբերտ Հաստեճյանի, Էթիեն Մահճուրյանի, Արա Քոչունյանի կարծիքները: Հայաստանյան լրատվամիջոցների վիճակի մասին խոսել են Աստղիկ Գեւորգյանը, Բորիս Նավասարդյանը, Նարինե Մկրտչյանը, Էդիկ Բաղդասարյանը, Շուշան Դոյդոյանը, Աշոտ Ձազոյանը, Սերգո Երիցյանը, Տիգրան Հարությունյանը, Արա Թադեւոսյանը, Կարինե Տիտանյանը, Հակոբ Ավետիքյանը, Արամ Աբրահամյանը, Նիկոլ Փաշինյանը, Հայկազն Ղահրիյանը, Արտյոմ Երկանյանը, Արսակ Ալեքսանյանը, Գոռ Գրիգորյանը: Հեռուստատեսային հումորին անդրադարձել են Աշոտ Ղազարյանն ու Արամ Սարգսյանը (Արամ Mp3): Համարում տեղ է գտել նաեւ մշակութային հավելվածը, որի վերջաբանում ներկայացված է Բեռլինում «Ortr»-ի՝ Արդի հայ արվեստին նվիրված հատուկ համարի շնորհանդեսի մասին լրատվությունը:

«Ortr» եվրոպական ամսագիր

ՄԱՆՈՒՖՈՒՄ

Ռիելտոր «Ֆլորես» Ածուրդի Տուն ՍՊԸ-ն «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում շարունակում է «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի ածուրդային վաճառքը՝

-Արտադրական տարածք, ընդ. մակերեսը՝ 3573,1 քմ, հողամաս՝ 0,07157 հա: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Խանջյան փողոց, 19: Մեկնարկային գինը՝ 238310100 ՀՀ դրամ:

Ածուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, մինչեւ 30.12.2011թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Ածուրդի մասնակիցները՝ ֆիզիկական անձի դեպքում պետք է ներկայացնեն անձնագիր, իրավաբանական՝ լիազորագիր եւ պետ. ռեգիստրի վկայականի պատճենը: Նախավճար չի սահմանված: Հաղթող է արձանագրվում լավագույն գնային առաջարկ ներկայացրած անձը: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ ածուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-45-13 կամ այցելել www.akson.am:

Երեւանի Աղրանֆա-Հումֆային Բորսայի հարթակում իրականացվելու է Ռուսաստանի Դաշնության արտադրության 913038 հատ մեկ լիտրանոց շշերով <<Միլորա>> ռաֆինացված արեւածաղկի ձեթի ածուրդային վաճառքը՝ դասական եղանակով, մեկ շիշը՝ 694 ՀՀ դրամ մեկնարկային գնով: Ձեթի պիտանելիության ժամկետը մինչեւ 2012թ սեպտեմբեր: Նշված քանակը տրոհված է 21 լոտի՝ յուրաքանչյուրը 43478 շիշ:

Ածուրդն իրականացվելու է 06.09.2011թ-ին ժ.12.00 ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Ածուրդին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՆՈՒՖՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն մշակվում է ՀՀ Արարատի մարզի Զորակ համայնքի վարչական տարածքում գործող «էկոֆիշ թրեյդ» ՍՊԸ-ը ձկնաբուծական նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսից 306 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. սեպտեմբերի 9-ին ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ԿՈՐԵԼ Է
«Էջմիածնի տպարան» ՓԲԸ-ի կլոր կնիքը և պետռեգիստրի վկայականը, գրանցման N 38.120.00535:
Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է
«Հուշարձանների վերականգնման «Կոտայք» ՊՓԲԸ-ի
կլոր կնիքը և պետռեգիստրի վկայականը, գրանցման N 85.140.00982:
Համարել անվավեր:

ԿՈՐԵԼ Է
«Հրազդանի գրախանութների միավորում» ՊՓԲԸ-ի
կլոր կնիքը և պետռեգիստրի վկայականը, գրանցման N 33.140.00738:
Համարել անվավեր:

Վաճառվում է Volkswagen Jetta

մակնիշի ավտոմեքենա, արտաքափայլ, արտ. 2000 թ., վաճ. 2001 թ., շարժիչը 2 լ., փոխանց. տուփը ավտոմատ, սրահը կաշվեպատ, դիմացի նստատեղերը տաքացվող, հայելիները, լյուկը եւ աղակիները (մուգ) էլեկտր., ունի կոնդիցիոներ: Գերազանց վիճակ: 095 02 66 19:

Հայտարարություն
«Երեւաննախագիծ» ՓԲԸ-ն հայտնում է, որ վաճառվում են երկրորդական օգտագործման փայտանյութ (փայտատաշեղային սալերի մասեր- ժիկ), որը բաղկացած է պահարանների եւ սեղանների մասերից:
Մանրամասներին կարող եք ծանոթանալ՝ ք. Երեւան, Փ. Բուզանդի 1/3 շենք, «Երեւաննախագիծ» ՓԲԸ, հեռախոս՝ 56-27-11:

Ընկերության ղեկավարություն

ՀՀ ԱՄՆ դեսպանատունը մրցույթի է հրավիրում

Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններին:
Մրցութային փաթեթները կարող են ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում,
ԱՄՆ դեսպանատան կենտրոնական մուտքից,
օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը, ժամը 9:00 – 18:00-ն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝2.9.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: